

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ԴՈՑԵՆՏ Լ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ԵՎ
ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

634:632

12934

P-88

Քոնստանտին Գ.

Գրքատուն Երևանի քա-

նազարի քաղաքում 42.

ԴՈՑԵՆՏ Հ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

634.1/7:632

թ-88

Հրատ.

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1963

632:634.1/7

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ
ԵՎ ՊԱՅԻՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

~~12934~~

A 18762



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ДОЦЕНТ А. Г. ТУМАНЯН

**Вредители плодовых деревьев и борьба
с ними**

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1948

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ վնասատու կենդանիները գյուղատնտեսական կուլտուրաներին հսկայական վնաս են պատճառում: Մասնավորապես մեծ վնաս են պատճառում պտղատու ծառերին: Յուրաքանչյուր տարի նրանք ոչնչացնում են պտղատու ծառերի բերքի 30-40 տոկոսը:

Վնասատու կենդանիների դեմ հաջող պայքար կազմակերպելու համար անհրաժեշտ է իմանալ՝ ինչպես են նրանք ապրում, բազմանում, տարածվում մեր կուլտուրական բույսերի վրա և ինչ վնաս են պատճառում նրանց: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի պայքարի ճիշտ միջոցառումներ կիրառել նրանց դեմ և թույլ չտալ, որ նրանք բազմաճանապարհաբանություն ու վնաս պատճառեն կուլտուրական բույսերին:

Պտղատու այգուց մշտապես բարձր և լիարժեք բերք ստանալու համար, անհրաժեշտ է, ագրոտեխնիկական միջաբան միջոցառումների հետ միասին, սխտեմատիկորեն ու ճիշտ ժամանակին կիրառել պայքարի միջոցառումները վնասատուների և հիվանդությունների դեմ:

Պտղատու այգիների վնասատուների կազմը շատ բազմազան է: Պտղատու ծառերի բազմատեսակ բնույթը սպեցիֆիկ պայմաններ է ստեղծում նրանց վրա բազմաթիվ տեսակի վնասատուներ կուտակվելու և նրանց տարբեր մասերին հարմարվելու համար: Վնասատուների մի մասը սնվում է պտղատու ծառերի բողբոջներով և ծաղիկներով, մյուս մասը՝ պտուղներով և տերևներով, կան նաև ուրիշներ, որոնք ծծում են ծառերի տերևների, ճյուղերի հյուսվածքը: Կան շատ վնասատուներ, որ ամենակեր են: Մրանք սնվում են տարբեր տեսակի ծառերի տերևներով և պտուղներով:

Պտղատու ծառերի վնասատուներից մի մասի հասցրած վնասը շատ պարզ երևում է: Այդ պատճառով էլ նրանց դեմ ձեռք են

առնվում պայքարի միջոցներ, իսկ մյուս մասի հասցրած վնասը մի անգամից չի նկատվում, որի հետևանքով էլ նրանց նկատմամբ ժամանակին չեն կիրառվում համապատասխան միջոցառումներ (պտղակերներ, բինխիտներ, ծաղկակերներ և այլն):

Պտղատու ծառերին մեծ վնաս են պատճառում միջատները: Մոտ 300 տեսակ այդպիսի միջատներ կան: Պտղատու ծառերին վնաս են պատճառում նաև տիզերը, կրծողներից մկանման կենդանիները, նապաստակները և այլն:

Որպեսզի ընթերցողը հեշտությամբ որոշի պտղատու ծառերի վնասատուները և կոնկրետ միջոցներ ձեռք առնի տվյալ վնասատուի դեմ, նպատակահարմար դասեր բրոշյուրում վնասատուները դասավորել ըստ առանձին կուլտուրաների:

Բրոշյուրի վերջում, պայքարի միջոցառումների սխեմա մշակելիս, նկատի ենք ունեցել ոչ միայն տվյալ կուլտուրայի վնասատուները, այլ նաև հիվանդութունները, որովհետև մեզ մոտ արտադրական պայմաններում նրանց դեմ պայքարի միջոցառումները տարվում են կոմպլեքսային ձևով:


ԽՆՁՈՐԵՆՈՒ, ՏԱՆՁԵՆՈՒ ԵՎ ՍԵՐԿԵՎԻԼՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Պտղատու ծառերի մեջ, վնասատուներից տուժում են բուրբից շատ հնդավորները: Կարելի է հաշվել բազմաթիվ տեսակի վնասատուներ, որոնցից, մեր պայմաններում, գլխավոր վնասատուներ են՝ խնձորենու պտղակերը, ծաղկակերը, ցեցը, լվիճները, կաղարկան, կեղևակերները և ուրիշները:

ԽՆՁՈՐԵՆՈՒ ԾԱՂԿԱԿԵՐԸ

Այս վնասատուն պատկանում է երկարակնճիթ բզեզների ընտանիքին: Հասուն բզեզի մարմինը ձվաձև է, 5 մմ երկարությամբ: Բզեզը գորշ-մոխրագույն է: Գորշ վերնաթևերի վրա կան բաց-մոխրագույն երկու շեղակի շերտեր: Էգը արուից տարբերվում է իր մեծությամբ: Էգի կնճիթը բարակ և ավելի երկար է, ծայրը քիչ ծոված: Ծաղկակերի թրթուրը անոտք է, ունի փոքր գլուխ և մսալի մարմին, երկարությունը հասնում է 7,5 մմ-ի: Հարսնյակը բաց տիպի է, դեղնագույն: Չուն կաթնասպիտակագույն է, կլոր, 0,5 մմ տրամագծով (տես նկ. 1):

Խնձորենու ծաղկակերը տարածված է Հայաստանի այն շրջաններում, որտեղ մշակվում է խնձորենին, բայց, որպես գլխավոր վնասատու, ամեն տարի բազմանում է նախալեռնային շրջաններում, Արարատյան դաշտավայրում, Կիրովականում, Դիլիջանում և հարավային շրջաններում:



Նկ. 1. Խնձորենու ծաղկակերը
 1) թրթուրը, 2) հարսնյակը, 3) բզեզը,
 4) վնասվածքը

Խնձորենու ծաղկակերի վնասը շատ մեծ է: Լինում են տարիներ, երբ նա ոչնչացնում է խնձորենու, տանձենու ծաղիկների մոտ 70 տոկոսը:

Հատ էնտոմոլոգ Արիստովի տվյալների, խնձորենու ծաղկակերը ձու է դնում միայն այն ծաղկակոկոնների մեջ, որոնցից պետք է պտուղ առաջանա:

ԾԱՂԿԱԿԵՐԻ ԲԻՈԼՈԳԻԱՆ

Հասուն բզեզը ձմեռում է թափված տերևների տակ, հողի ձեղքերում, բնի կիսապոկկեղևների արանքում և այլ թաքուն տեղերում:

Գարնանը, երբ ձյունը հալչում է և օդի ջերմությունը հասնում է 6⁰-ի, բզեզները աստիճանաբար դուրս են գալիս ձմեռելուց: Երբ օդի ջերմությունը հասնում է 10⁰-ի բզեզները արագ շարժվում են և թռչում:

Նրանք աստիճանաբար, նախ ծառի բնի վրայով, իսկ հետագայում թռչելով, բարձրանում են սաղարթի վրա, և բողբոջների ուռչելու շրջանում, իրենց երկար կնճիթով ծակում են բողբոջները և սևում նրանց պարունակությունը:

Բզեզները բողբոջներով սնվում են մինչև ծաղկակոկոնների կազմակերպվելը: Այդ ժամանակաշրջանում բզեզի սեռական օրգաններում հասունանում են ձվերը, որից հետո նա բեղմնավորվում է:

Երբ ծաղկակոկոնները ուռչում են, այդ ժամանակ, էզը պսակաթերթերի արանքից ծակելով այն, ձուն դնում է ծաղկակոկոնի մեջ: Մեկ էզ բզեզը կարող է դնել 50-100 ձու:

Զվի դարգայման շրջանը տևում է 3-10 օր, որից հետո դուրս է գալիս ծաղկակերի սպիտակ, անոտք թրթուրը: Թրթուրը սկզբում սնվում է փոշանոթներով, իսկ երկրորդ հասակից՝ առեչքներով ու վարսանդներով: Նա իր մածուցիկ արտաթորանքով ներսից ծեփում է ծաղկակոկոնը և պսակաթերթերը սխալնում միմյանց, այնպես որ ծաղիկն այլևս չի բացվում: Ուտելով ծաղիկի բոլոր առեչքներն ու վարսանդը, թրթուրը 15-20 օր հետո հարսնեկավորվում է այդ փակ ծաղկակոկոնի մեջ: Մասսայական հարսնեկավորումը տեղի է ունենում խնձորենու ծաղկման վերջում: Բզեզները հարսնյակներից դուրս են գալիս 7-12-րդ օրը: Վնասված ծաղկակոկոնները դորշանում ու չորանում են:

Բզեզը ծաղկակոկոնից դուրս գալուց հետո, անցնում է տերևների վրա: Որոշ ժամանակ սնվում է տերևներով՝ կմախքացնելով այն վերին կամ ներքին կողմից և առաջացնելով նրանց վրա կլոր, մանր անցքեր: Ամառը, երբ օդի ջերմությունը բարձ-

Վերցնել 1 լիտր ջրին 2 գրամ փարիզյան կանաչ և 4 գրամ
չհանգած կիր. մեկ ծառի վրա այդ սլաարաստած հեղուկից
սրսկել 5-6 լիտր:

Մեծ այգիներում կարելի է կիրառել թունավոր փոշիներ,
օրինակ՝ կալցիումի արսենատ (մեկ հեկտարին 10-12 կիլոգրամ)
կամ ԴԴՏ-ի (5 տոկոս) փոշիով փոշոտել:

ԽՆՁՈՐԵՆՈՒ ՑԵՅԸ (ЯБЛОННАЯ МОЛЪ)

Փոքրիկ թիթևո է: Նրա առջևի դույզ թևերը արծա-
թագուշն-սպիտակ են՝ երեք շարք սև կետերով, ետևի թևերը
մոխրագուշն են. թևերի բացվածքի երկարությունը մոտ 19 մմ
է, մարմնի երկարությունը՝ 8-9 մմ:

Թրթուրի մեծությունը հասնում է 18-19 մմ-ի: Նրա գորշ-
դեղնավուն մարմնի վրա երկարությամբ անցնում են երկու
շարք սև կետեր:

Գլուխը և ոտքերը սև են:

Հարսնյակը նարնջադեղնագուշն է և լինում է սպիտակ
մետաքսյա բոժոժի մեջ (տես նկ. 2):

Խնձորենու ցեցը տարածված է համարյա մեր բոլոր շրջ-
ջաններում՝ Արարատյան դաշտում, Հայաստանի հարավային,
նախալեռնային շրջաններում, Իջևանում, Դիլիջանում, Նոյեմ-
բերյանում, Ալավերդում: Սա խնձորենու լուրջ վնասատուներ-
ից է:

Թրթուրային հասակում ձմեռում է մեկ տարեկան բարակ
ճյուղերի վրա, հատուկ «վահանիկի» տակ: Յուրաքանչյուր վա-
հանիկի տակ տեղավորված կան 40-70 թրթուր: Վահանիկի
դուշնը շատ նման է խնձորենու ճյուղերի դուշին:

Գարնանը, բողբոջները բացվելուց հետո, խնձորենու ցեցի
ձմեռող թրթուրները դուրս են գալիս ձմեռելուց, ծակում են վա-
հանիկը և բոլորը մեկ անցքից դուրս են գալիս ու մտնում նոր
դուրս եկած տերևներից մեկի մեջ: Ներսից ուտում են այդ տե-
րևի պարենիսիմային փափուկ մասը, թողնում են ամբողջական
տերևի աղանված մաշկը միայն: Նրանք երբեմն աղանում են
մի քանի տերև, որից հետո թրթուրները դուրս են գալիս տերևի
միջից և կերակրվում՝ տերևների վրա: Նրանք ուտում են տերև-
ների փափուկ հյուսվածքները, թողնելով միայն ջղերը: Վնաս-

ված տերևները դորշանում ու չորանում են: Այսպիսի տերևները բոցով այրվածի տեսք են ստանում: Վնասված տերևները ստալնաթելերով միացնելով պատրաստում են բներ: Հետագայում, քանի թրթուրները մեծանում են, այնքան արագ շարժվում են նոր ճյուղերի վրա և մեծացնում իրենց ստալնաթելերը: Եթե տվյալ ծառը չի բավարարում նրա վրա եղած թրթուրների լրիվ դարգացմանը, նրանք անցնում են հաջորդ ծառի վրա: Այդ անցումը թրթուրները կատարում են իրենց բերնից բաց թողած ստալնաթելի միջոցով: Թրթուրները ստալնաթելերով կախ են ընկնում ծառի ճյուղերից, քամուց շարժվելով՝ ճոճվում են օդում ու գնում կաշնում մյուս ծառի ճյուղին կամ տերևին:

Բավական է որ մեկ-երկու թրթուր մեկ ծառից անցնեն հաջորդ ծառին, որից հետո, նրանց ստալնաթելի վրայով, անցնում են նախորդ ծառի վրա գտնվող բոլոր թրթուրները: Անցնելու ժամանակ, յուրաքանչյուր թրթուր իր ստալնաթելն է բաց թողնում և միացնում մյուս ծառին: Եթե ծառը ծառից 6-7 մետր հեռավորության վրա է գտնվում, ապա թրթուրները իջնում են սաղարթից և բնի վրայով բոլորը միասին շարժվում են դեպի հաջորդ ծառը: Նման դեպքերում ծառի բունը, գլխավոր ճյուղերը և մի ծառից մինչև մյուս ծառը ընկած տարածությունը նեղ շերտով ծածկվում է մետաքսյա թելերով:

Իրենց դարգացման վերջին շրջանում թրթուրները ազահարար ուտում են թե տերևները և թե կանաչ շվերի փափուկ մասերը, պտուղները, պտղակոթերը: Իսկ եթե այդում խնձորի ծառերը քիչ են՝ նրանք սնվում են ուրիշ պտղատու ծառերի (ծիրանենի, սալորենի, բալենի և այլն) տերևներով և պտուղներով: Պտղատու ծառերը քիչ լինելու դեպքում թրթուրները սնվում են բարդենու, ուռենու և այլ ծառերի տերևներով և կամ ուղղակի անցնում են մոլախոտերի վրա:

Խնձորենու ցեցի թրթուրներն իրենց դարգացման ընթացքում միշտ էլ ապրում են խմբերով՝ ստալնաթելների մեջ, պաշտպանվելով պարազիտ և դիշատիչ կենդանիներից:

Թրթուրների դարգացման շրջանը տևում է մոտ մեկամիս, որից հետո հարսնեկավորվում են իլիկաձև, սպիտակ, մետաքսյա բոժոժների մեջ: Մասսայական հարսնեկավորման նախօրյա-

կին թրթուրները հավաքվում են մեծ խմբերով մեկ ուսայնա-
 բնի մեջ: Հարսնեկավորումը կատարվում է հունիսի երկրորդ
 կեսին: Երկու-երեք շաբաթից հետո, հարսնյակներից դուրս են
 թռչում թիթեռները: Թիթեռների մասսայական թռիչքը կատար-
 վում է հունիսի վերջին—հունիսի սկզբին: Թիթեռները ցերեկը
 չեն թռչում: Նրանք հանդիսատեսում են տերևների տակ: Մի
 քանի օրից հետո, թիթեռները կույտերով ձվեր են դնում բարակ
 ճյուղերի վրա և ձվահույտերը ծածկում՝ լորձուքանման
 նյութով, որը հետագայում պնդանում և ձվերի կեղևների հետ
 միասին կազմում է «վահանիկ»՝ ձմեռող թրթուրների համար:
 Իրված ձվերից 3-4 շաբաթ հետո դուրս են գալիս թրթուրնե-
 րը և այդ վահանիկի տակ ձմեռում՝ մինչև գարուն: Այսպիսով,
 խնձորի ցեցը տարեկան տալիս է մեկ սերունդ:

Խնձորենու ցեցի հասցրած վնասը շատ մեծ է: Նա ամեն
 տարի ոչնչացնում է խնձորենու կանաչ մասերը և բույսերին
 դրկում ասիմիլացիայի օրգաններից, որի հետևանքով պտուղ-
 ները կամ թափվում են, կամ չեն զարգանում: Ժամանակին
 ձեռնարկված պայքարի միջոցառումներով կարելի է կանխել
 ցեցի վնասը:

ՊՍՅԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Աշնանը՝ տերևաթափից հետո, կամ գարնանը՝ մինչև
 բողբոջների բացվելը, ծառերը սրահել՝

ա) 8-10 տակոս հանքայուղային էմուլսիայով կամ կալ-
 ցիումի պոլիսուլֆիդի 8% խտությամբ լուծույթով:


բ) 3 տակոս հիմնայնությամբ ենթասապոսնային սուղակ-
 ներով կամ մաքուր սոլիարական յուղով՝ հեկտարին 100-150
 կգ (ավիացիայի միջոցով):

2. Գարնանը, ականված տերևներից թրթուրներ դուրս գա-
 լու շրջանում, ծառերը սրահել փարիզյան կանաչի և անաբա-
 դինի կամ նիկոտին սուլֆատի խառնուրդով, վերցնելով մեկ լիտր
 ջրին 1,5 գրամ փարիզյան կանաչ, 3 գրամ չհանդած կիր և նի-
 կոտին սուլֆատ: Մեկ ծառի վրա սրահել 8-12 լիտր պատրաս-
 տի խառնուրդ: Փարիզյան կանաչ չլինելու դեպքում, կարելի
 է ծառերը սրահել կալցիումի արսենատի 0,3 տակ, սուսպենզիայով

կամ նրանով փոշոտել (մեկ հեկտարի համար 12—15 կիլոգրամ թուջն)։

3. Տնամերձ ծառերի վրայից, վաղ դարնանը, կարելի է հավաքել թրթուրների ոստայնաբները։

4. Գարնանը, առաջին անգամ սրսկելուց հետո ծառերի վրա թրթուրներ մնալու դեպքում, պետք է սրսկումը կրկնել



Նկ. 3. Ալոճաթիթեռ

- 1) Չվահոււյտը, 2) ձուռն, 3) թրթուրը, 4) հարսնյակը, 5) թիթեռը, 6) վնասվածքը

Երկրորդ, իսկ եթէ անհրաժեշտ է, երրորդ անգամ։ Սրսկումները

պետք է կրկնել նաև այն դեպքում, երբ սրսկելուց հետո անձրև է տեղում:

ԱԼՈՃԱԹԻԹԵՌ (БОЯРЫШНИЦА)

Սպիտակ թևերով մեծ թիթեռ է. թևերի վրա շատ լավ երևում է սև գույնի ջղավորումը (տես նկ. 3):

ՀՍՍՌ-ում ալոճաթիթեռը տարածված է նախալեռնային և լեռնային շրջաններում: Ալոճաթիթեռը բազմակեր է, նրա թրթուրը սնվում է պտղատու բոլոր ծառերի, թփուտների և անտառային ծառերի տերևներով: Երրորդ հասակի թրթուրները ձմեռում են ձմեռային բներում. այս բները իրենք թրթուրներն են պատրաստում մի քանի տերև (1 կամ 2, բայց ոչ ավել 4-ից) ոտալայնաթելերով միմյանց միացնելով: Մեկ բնում ձմեռում են 5—40 թրթուր: Տերևաթափից հետո, բները մնում են ծառերի ճյուղերից կախված՝ մինչև գարուն: Վաղ գարնանը, թրթուրները դուրս են գալիս ձմեռված բներից և ուտում են նոր բացվող բողբոջները, իսկ հետագայում՝ տերևները, կոկոնները և ծաղիկները: Հասուն թրթուրները մոխրագույն են և ծածկված են մազերով: Մեջքի վրա ունեն նարնջագույն խաչերով երեք երկար սև գույներ:


Հունիսին թրթուրները հարսնեկավորվում են ծառի բնի, ճյուղերի և նույնիսկ տերևախոթունի վրա: Հարսնեկավորումից 10—12 օր հետո, թիթեռները դուրս են գալիս և մի քանի օր թռչելուց հետո, կույտերով ձուռ են դնում տերևների վերի երեսին: Չվերը նարնջադեղնագույն են: Մեկ էգ թիթեռը կարող է դնել մինչև 300 ձուռ:

Չուռ դնելուց մոտ երկու շաբաթ հետո դուրս են գալիս թրթուրները, որոնք սնվում են տերևներով ու մինչև աշուն երկու-երեք անգամ մաշկափոխվում են: Թրթուրները ձմեռում են տերևներից պատրաստած բների մեջ:

ՈՍԿԵՏՈՒՏԻՎ (Златогызка)

Իր զարգացման ցիկլով և հասցրած վնասի բնույթով ոսկեատուտիկը հիշեցնում է ալոճաթիթեռին: Սա սպիտակ գույնի թիթեռ է: Թևերի բացվածքը 3,5 սմ է: Էգի փորի ծայրը ծածկված է ոսկեգույն թեփուկներով, որի համար էլ ստացել է ոսկեատուտիկ անունը:

Թրթուրը՝ մուգ-մոխրագույն է, մեջքին և կողերին երկարաբաժնի դասավորված երկու շարք կարմիր գորտնուկներ և սպիտակ բծեր ունի: Այդ գորտնուկները ծածկված են մազիկներով փնջերով: Երբ այդ մազիկները կտարվում և ընկնում են մարդկանց մաշկի վրա՝ առաջացնում են կարմիր բշտիկներ (տես նկ. 4):



Նկ. 4. Ոսկետուտիկ

- 1) Չվակույտ, 2) ձուն, 3) Թրթուրը, 4) հարսնյակը, 5) Թիթեուց, 6) վնասվածքը:

Ոսկեատուտիկի երրորդ հասակի թրթուրները ձմեռում են ձմեռային բներում, ինչպես ալոճաթիթեռը: Ի տարբերություն ալոճաթիթեռից, ոսկեատուտիկի թրթուրները ձմեռային բները պատրաստում են 5-8 տերևներից և յուրաքանչյուրի մեջ կարող են ձմեռել 200-300 թրթուր:

Ձմեռային բները մետաքսյա թելերով շատ ամուր միացված են լինում ծառի ճյուղերին: Գարնանը թրթուրները դուրս են գալիս ձմեռային բներից և սնվում են պտղատու և անտառային ծառերի բողբոջներով ու տերևներով: Հունիսին թրթուրները հասունանում են ու ճյուղերի տերևների արանքում հարսնեկավորվում՝ գորշ գույնի մետաքսյա բոժոժների մեջ: Հարսնյակներից՝ երկու-երեք շաբաթից հետո դուրս են թռչում օպիտակ թիթեռներ: Թիթեռները թռչում են միայն գիշերները: Բեղմնավորվելուց հետո, էգերը կույտերով ձվեր են դնում տերևների հակառակ երեսի վրա և ձվակույտը ծածկում՝ փոքի վերջի ոսկեգույն թեփուկներով: Մեկ էգը կարող է դնել մինչև 300 ձու: 15-20 օր հետո ձվերից դուրս են գալիս թրթուրները: Նրանք սնվում են տերևներով՝ մինչև աշուն, որից հետո պատրաստում են ձմեռային բներ ու մտնում բների մեջ՝ ձմեռելու:

Ոսկեատուտիկը մասսայաբար բաղմանում է առավելապես Մեղրիի, Ապարանի, Կոտայքի, Ղարաբաղլարի և նախալեռնային այլ շրջանների անտառներում և այգիներում: 1947 թվին նամեծ քանակությամբ տարածվել էր Կոնստրուկտի տրեստի № 1 սովխոզում: Շատ մեծ վնաս է պատճառում խնձորենուն, սալորենուն, ծիրանենուն, կաղնուն և այլ ծառատեսակներին:




ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԱԼՈՃԱԹԻԹԵՌԻ ԵՎ ՈՍԿԵՏՈՒՏԻԿԻ ԴԵՄ

1. Տերևաթափից մինչև գարնանը՝ բողբոջների ուռչելը, հավաքել և այրել ծառերի վրա ամրացրած ձմեռային բները:

2. Գարնանը և ամռանը ծառերը սրակել կամ փոշոտել աղիքային թուջներով, վերցնելով մեկ հեկտարին 12—15 կգ կալցիումի արսենատ: Սրակելու համար 1 լիտր ջրին վերցնել 1,5 գրամ փարիզյան կանաչ, կրկնակի քանակությամբ չհանգած կիր կամ 20--30 գրամ կալցիումի արսենատ:

ՕՂԱԿԱՎՈՐ ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾ (кольчатый шелкопряд)

Վնասում է բոլոր պտղատու ծառերին: Տարածված է ամենուրեք: ՀՄՍՌ-ում մասսայական չափերով բաղմանում է հարչնադեղնադուլին, թիթեռի թևերը դարչնադեղնադուլին, ըստորում, առջևի թևերի վրա կան լայնքով գնացող մուգ-



Նկ. 5. Օղակավոր մետաքսագործ

- 1) ձվակույտը, 2) թրթուրը, 3) հարսնյակը, 4) էգ թիթեռը, 5) արուն, 6) վնասվածքը:

դարչնադուլին շերտեր: Արունները էգերից փոքր են՝ սանրաձև

բեղիկներով: Թևերի բացվածքը 35-40 մմ է: Հասուն թրթուր-
ների մեջքի կողմից երկարությամբ անցնում են երկնամասի-
րագույն և դեղնադարչնագույն գույն: Թրթուրի մարմինն ամ-
բողջությամբ պատած է փափուկ մազիկներով (տես նկ. 5):

Լրիվ ձևավորված թիթեռները ձմեռում են ձվապատյանի
մեջ: Չվերն օղակաձև շարված են լինում մեկ տարեկան բարակ
ճյուղերի վրա: Չվերի քանակը մեկ օղակի մեջ հասնում է
300-400-ի:

Գարնանը՝ բողբոջների բացման շրջանում, նախապես կըլ-
ծելով ձվապատյանը, ձմեռող ձվերից դուրս են գալիս փոքր
սև թրթուրները, որոնք ծառերի կամ թփուտների ճյուղերի վրա
պատրաստում են ոստայնաբույն:

Թրթուրները սնվում են բողբոջներով և տերևներով, դըլ-
խավորապես գիշերները, իսկ ցերեկներն ու վառ եղանակներին
հավաքվում են բների մեջ և ոչինչ չեն ուտում: Թրթուրների
մաշկափոխությունը կատարվում է բներից դուրս. յուրաքան-
չյուր մաշկափոխությունից հետո, նրանք մեծացնում են բույնը
ոստայնի նոր շերտով: Այսպիսով, հին բների քանակով կարելի
է մոտավորապես հաշվել անցած մաշկափոխությունները: Թրթ-
ուրները սնվում են գլխավորապես տերևներով. ուտելով
տերևի ամբողջ թիթեղը, թողնում են միայն գլխա-
վոր ջիղը: Հասուն թրթուրները ցրվելով ապրում
են առանձին-առանձին: Գտնելով հարմար տեղ տերև-
ների ծալքերում, կեղևների ձեղքերում, թփուտների վրա, մոտիկ
շենքերում՝ հյուսում են մետաքսյա ամուր բոժոժ, որի մեջ
էլ հարսնեկավորվում են: Հարսնյակի շրջանը տևում է 10-15 օր:

Թիթեռների թռիչքը կատարվում է գիշերները:

Մեկ-երկու օրից հետո, թիթեռները օղակաձև ձվադրում
են բարակ ճյուղերի վրա և սատկում: Մեր պայմաններում օղա-
կավոր մետաքսագործի թիթեռները ձվադրումը կատարում են
մեծ մասամբ վայրի թփուտների՝ հատկապես մասրենու վրա:
Տարեկան տալիս են մեկ սերունդ:

ՊԱՅԻԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ


1. Աշնանը, տերևաթափից հետո, կտրել ձվերի օղակները և
այրելով ոչնչացնել:

2. Գարնանը թփուտների և ծառերի վրայից կտրել օղակալոր մետաքսագործի թրթուրների բները և ոչնչացնել:

3. Թրթուրների սնման շրջանում ծառերը սրսկել կամ փոշոտել աղիքային թուշնով:

ՏԱՐԱԶՈՒՅԳ ՄԵՏԱԲՍԱԴՈՐԾ (Непарный шелкопряд)

Այս մետաքսագործը տարազույգ է կոչվում, որովհետև նրա էգը մեկ ու կես անգամ մեծ է արուից: Էգը բաց-դեղնամոխր-



Նկ. 8. Տարազույգ մետաքսագործ. 1) ձվակույտը, 2) ձուռն, 3) թրթուրը, 4) հարսնյակը, 5) թիթեռը (էգը), 6) արուռն, 7) վնասված տերևը:

րագույն է: Արուես փոքր է՝ փետրածե բեղիկներով, մուգ-գորշ գույնի: Հասուն թրթուրները մեծ են՝ 7-8 սանտիմետր, գորշ-մոխրագույն, կարմիր և կապույտ գորտնուկներով. ամբողջ մարմինը ծածկված է երկար մազերով (տես նկ. 6):

Տարագույգ մետաքսագործը ձմեռում է ձու ստադիայում: Չվերի կույտերը լինում են ծառերի բների հիմքի մասում, կեղևների ճեղքերում, փշակներում, քարերի, փայտերի վրա: Յուրաքանչյուր ձվակույտում լինում է 500-600 ձու: Չվակույտերը էզը ծածկում է իր փսրի մազիկներով: Գարնանը ձվերից դուրս են գալիս թրթուրները, որոնք բնի վրայով աստիճանաբար բարձրանում են ծառի սաղարթի վրա և սնվում՝ նոր բացված բողբոջներով, իսկ հետո՝ տերևներով: Հունիսի վերջին, հուլիսի սկզբին թրթուրը հասունանում է և հարսնեկավորվում տերևների վրա՝ թափանցիկ մետաքսյա բոժոժի մեջ: Հարսնյակները մուգ-սև գույնի են: Թիթեռները հուլիսի վերջերին թռչում են: Օգոստոսին կույտերով ձվադրում են ծառերի բների վրա և սատկում:

Տարագույգ մետաքսագործը շատ վտանգավոր վնասատու է և մասսայական բաղմացման տարիներին կարող է լուրջ վնաս պատճառել:

ՊԱՅԻԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Աշնանից մինչև գարուն, մինչև բողբոջների բացվելը, գտնել ձվակույտերը և ոչնչացնել՝ տրորելով կամ վրան մաքուր նավթ քսելով:

2. Գարնանը, երբ թրթուրները սկսում են սաղարթի վրա բարձրանալ, սրսկել աղիքային թույններ կամ փոշոտել նրանով:


Սրսկել փարիզյան կանաչի 0,15 տոկ. սուսպենզիայով, կամ փոշոտել կալցիումի արսենատի փոշիով՝ հեկտարին 10-12 կգ:

3. Վաղ գարնանը ծառերի բներից կապել թրթուրորս սոսինձից գոտիներ: Սոսինձը 20-25 սմ լայնութամբ քսել հաստ և պինդ թղթի վրա և թուղթը թելով ամուր կապել ծառի բնից:

Կ Ա Ձ Ա Ր Կ Ա

Պատկանում է երկարակնճիթների ընտանիքի ուինխիտների ցեղին: Հասուն բզեզը ոսկեկարմրագույն է, կանաչ

մետաղական փայլով: Մարմնի երկարությունը 6 մմ է: Մարմինը ծածկված է դարչնագույն խիտ մազիկներով: Թրթուրը անոտք է, դեղնասպիտակափուն գույնով, դարչնագույն գլխով, երկարությունը 3—9 մմ: Հարսնյակը սպիտակ է և ծածկված՝ հաստ մազերով (տես նկ. 7):



Նկ. 7 Կազարկա (ոխնխիտ)

1) ձու, 2) թրթուրը, 3) հարսնյակը, 4) բզեզը, 5, 6 և 7) փասվածքները:

Կազարկան լայն չափով տարածված է և պտղատու ծառերից՝ խնձորենու, սալորենու, բալենու գլխավոր վնասատուն է: ՀՍՍՌ-ում կազարկան լայն չափով տարածված է հախալեռնային շրջաններում:

Կազարկայի բիոլոգիան

Կազարկայի դարձացման ցիկլը մի մասի մոտ տևում է երկու տարի, իսկ մյուս մասի մոտ՝ մեկ տարի: Իրա համար էլ նա ձմեռում է երկու ստադիայով՝ թրթուրի և հասուն բզեզի: Բզեզները ձմեռում են թափված տերևների տակ, հողի

ճեղքերում, ծառի բների հիմքի մասում, իսկ թրթուրները՝ թափված պտուղների մեջ կամ հողում:

Չմեռող բզեզները գարնանը ծառ են բարձրանում խնձորենու բողբոջների ուռչելու շրջանում: Սկզբում սնվում են բողբոջներով, իսկ հետագայում՝ պտուղներով: Բզեզները սաղարթի վրա ապրում են մինչև աշուն: Երբ պտուղները կազմակերպվում են և դառնում փոքր կաղինի չափ, բզեզները սկսում են ձվադրել պտուղների մեջ և կրծել պտղակոթերը, որի հետևանքով շատ պտուղներ արագ թափվում են: Բացի ձվադրումից, բզեզները պտուղները բաղմաթիվ տեղերից ծակծկում են: Պատի մեջ դրված ձվից 7-9 օր հետո դուրս է գալիս սպիտակ անոտք թրթուրը: Պատահում է, որ մի պտղի մեջ դնում են մի քանի ձու: Թրթուրն ապրում է մեկից մինչև մեկ ու կես ամիս, սնվում է պտղի մսով և սերմերով: Վարակված պտուղները թափվում են: Պատի հետ միասին գետնի վրա է ընկնում թրթուրը: Արագ նեխվող պտուղների միջից դուրս են գալիս թրթուրները, մտնում հողի մեջ, հողից պատրաստում օրրան և նրա մեջ ձմեռում: Թրթուրների զարգացման շրջանը տևում է 12—14 ամիս:

Թրթուրները հարսնեկամորձում են հողի մեջ 2—3 սմ խորության վրա: Հարսնյակի ստադիան տևում է 10—15 օր: Հարսնյակներից դուրս եկած բզեզները բոժոժների մեջ են մնում 20-30 օր, որից հետո ամռան կեսին բարձրանում են ծառերի վրա ու մինչև աշուն սնվում նոր կազմակերպվող բողբոջներով, մեծ վնաս պատճառելով հաջորդ տարվա բերքին: Սա հանդիսանում է նաև անկային փտում հիվանդության տարածողը:

Կազարկայի բզեզը, ինչպես խնձորենու ծաղկակերը, ծառի փոքր ցնցումից ոտքերը ծալում և գետին է ընկնում:

ՊԱՅԻԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Աշնանը, այդուհի, ծառերի տակից հավաքել թափված տերևները, պտուղները և այլն:
2. Ծառերի սաղարթի տակ թափված տերևներից պատրաստել արհեստական ձմեռելու տեղ և ուշ աշնանը կամ վաղ գարնանը խնամքով հավաքել և այլն:
3. Ծառերի հիմքում կապել ձողտից կամ մանր տաշեղ-

ներից՝ որսող գոտիներ և ձմեռը, կամ վաղ դարնանը հավաքել ու աչրել: Գոտիների հետ միասին կայրվեն նրանց մեջ հավաքված բզեղները:

4. Գարնանը մի քանի անգամ ծառերը թափ տալ սափանների վրա, առաջին անգամ՝ մինչև ծաղկելը, բողբոջները ուռչելու շրջանում, երկրորդ՝ բողբոջները բացվելիս, իսկ երրորդ անգամ՝ ծաղկելուց անմիջապես հետո:

5. Ուշ աշնանը փորել կամ վարել ծառերի միջշաքային տարածությունը և աննպաստ պայմանների ստեղծել ձմեռող թրթուրների համար, որ նրանց մեծ մասը ոչնչանա ձմեռվա սառնամանիքներից և վաղ դարնան ցրտերից: Այնտեղ, ուր հնարավոր է, աշնանը ջրել այգին:

6. Ոչնչացնել այգու շուրջը գտնվող վայրի կորիզավոր թփուտները:

7. Սմառվա ընթացքում շարունակել ծառերի թափ տալը 2-3 անգամ և սխտեմատիկորեն ամեն օր հավաքել պտուղների թափուկը և այգուց դուրս տանել:


8. Պտուղների բաժակավորման շրջանում՝ այգին փոշոտել կալցիումի արսենատի փոշիով, վերցնելով մեկ հեկտարի համար 15-20 կգ:

ԲՐԴԱՊԱՏ ԾԱՂԿԱԿԵՐ ԲԶԵՋ (Аленка)

Տարածված է ՍՍՌՄ-ի հալածվային մասում: Բզեզը ուտում է պտղատու ծառերի՝ խնձորենու, տանձենու, սերկելիլու և այլ պտուղների ծաղիկները:

Բզեզը սև-փայլուն գույնի է, ծածկված դեղնամոխրագույն երկար մազերով: Վերնաթևերի վրա կան սպիտակ-մարմարյա գույնի խալեր (տես նկար 8):

Այս բզեզը ձմեռում է հողում: Վաղ դարնանը դուրս գալով, սկզբում սնվում է վաղ ծաղիկող տարրեր տեսակի մուշխոտների ծաղիկներով, իսկ հետագայում՝ պտղատու ծառերի ծաղիկներով:



Նկ. 8. Բրդապատ բզեզ:

Առաջին հերթին սնվում է ցածր ծառերի ծաղիկներով (խնձորենի, տանձենի, սերկևիլի և այլն):

Բզեզներն ուտում են ծաղիկ պսակաթերթերը, առեջքների փոշանոթները և վարսանդի սպին: Գարնանն անընդհատ սընվում են պտղատու ծառերի ծաղիկներով, հաջորդաբար անցնելով ուշ ծաղկող ծառերից խաղողի վազի վրա, հետագայում՝ դաշտային կուլտուրաների և մուլախոտերի վրա:

Հուլիսին էզը ձվադրում է, 2—5 սմ խորությամբ հողում, 2—4 ձու: Մեկ էգ բզեզը ընդամենը դնում է մոտ 20 ձու: Երկու շաբաթից հետո դուրս են գալիս թրթուրները, որոնք սնվում են բույսերի փտած մնացորդներով: Թրթուրի զարգացման շրջանը տևում է 2—3 ամիս, որից հետո հարսնեկավորվում է հողի բնիկի մեջ: Աշնանը հարսնյակներից դուրս եկած բզեզները մնում են հողի բնիկների մեջ մինչև գարուն: Տարեկան զարգանում է մեկ սերունդ:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Ոչնչացնել այգու շուրջը և միջշաբաթյին տարածություններում բուսած մուլախոտերը:

2. Վաղ գարնանը, բզեզներին հավաքել ցածր և շուտ ծաղկող ծառերի ճյուղերի վրայից և ոչնչացնել (զցել նավթով կամ լցրած դուլի մեջ):

3. Ամառը վարել միջշաբաթյին տարածությունները (թրթուրներին ոչնչացնելու խմաստով):


ԽՆՁՈՐԵՆՈՒ ՊՏՂԱԿԵՐ (яблонная плодожорка)

Պտղակերը խնձորենու ու սերկևիլու ամենազգխավոր վնասատուն է: Փոքրիկ թիթեռ է, թևերի բացվածքը 1 սմ: Նրա առաջին զույգ թևերը մուգ-մոխրագույն են, լայնակի ալիքաձև մուգ գծերով, թևերի գաղաթին կան կարմիր-սպիտակ գույն, աղեղնաձև շերտեր (հայելիներ) (տես նկ. 9):

Հասուն թրթուրը բաց վարդագույն է, ունի ծոծրակի վահանիկ, որը մուգ-գորշագույն է և երեք զույգ խկական ու 5 զույգ կեղծ ոտքեր: Հասուն թրթուրի երկարությունը 18—20 սմ է:

Այս պտղակերը շատ վաղուց հայտնի է գյուղատնտեսու-

Թյան մեջ որպես խնձորենու գլխավոր վնասատու և խնձորը որդնացնող: Իրա համար շատ այգեգործներ լավ ճանաչում են նրա թրթուրներին ու վնասած պտուղը: Պտղակերի թիթևոն



Նկ. 9. Խնձորենու պտղակերի թիթևոն, թրթուրը և վնասված պտուղները:

շատ քչերն են ճանաչում, որովհետև նա ցերեկը չի թռչում: շատ փոքր է և ծառի ճյուղերի կեղևի գույն ունի: Այս վնասատուն տարածված է ամենուրեք, որտեղ մշակվում է խնձորենի կամ այլ հնդավորներ: Զարգանում է խնձորենուց բացի նաև սերկևիլու, տանձենու և ծիրանենու վրա: Լինում են տարիներ, երբ այս պտղակերը 100 տոկոսով վարակում է խնձորենու և սերկևիլու պտուղները: Նա մեծ վնասներ է պատճառում հատկապես ՀՍՍՌ-ի հարավային տաք շրջաններում:

ՊՏՂԱԿԵՐԻ ԲԻՈԼՈԳԻԱՆ

Պտղակերի հասուն թրթուրները ձմեռում են մետաքսյա պինդ բոժոժների մեջ, ծառի բնի, ճյուղերի, չորացած կիսապուկ կեղևների տակ, այգում թափված փայտերի վրա, տարաների մեջ, պահեստների փայտային մասերի արանքում, հողում և այլ տեղերում:

Գարնանը ձմեռող թրթուրների հարսնեկավորումը տեղի է ունենում ծաղկակոկոսների գուռավորման շրջանում: Թրթուրների հարսնեկավորումը տևում է 39—40 օր: Հարսնյակի ստադիան տևում է 7—10 օր հարավային շրջաններում, իսկ 15—20 օր՝ լեռնային շրջաններում: Հարսնյակներից թիթևոնե-

րի թուիչքը կատարվում է այն ժամանակ, երբ արդեն կազմա-
կերպվել են պտուղները և նրանց վրայից թափվում են բաժա-
կաթերթերի մնացորդները:

Թիթեռների թուիչքը շատ ձգձգված է: Պտղակերը Արարատ-
յան դաշտում, Մեղրիում և Աշտարակի շրջաններում տալիս է
երեք գեներացիա (սերունդ), նախալեռնային և մի շարք այլ
շրջաններում (Կոտայք, Ղարաբաղլար, Իջևան, Գորիս, Ալավեր-
դի, Նոյեմբերյան և այլ նման շրջաններում) երկու գեներացիա:
Լեռնային շրջաններում (Կիրովական, Դիլիջան, Ստեփանավան
և այլն) մեկ գեներացիա:

Առաջին գեներացիայի թիթեռները, հարսնյակներից դուրս
դալով՝ 10-12 օր հետո սկսում են ձվադրել: Թիթեռները ձվա-
դրում են հատ-հատ, տերևների, շվերի և մեծացած պտուղների
վա: Նրանց ձվերը շատ փոքր են, տափակ և նման մոմի մի
փոքր կաթիլի:

Էգը դնում է 60-70 ձու: Ամառվա դրած ձվերից 6-7 օր
հետո դուրս են գալիս թրթուրները և շարժվում՝ դեպի մոտա-
կա պտուղը: Թրթուրները պտղի մեջ են մտնում (80-90 տո-
կոսով) պտղաբաժակի միջով: Պտղի մեջ մտնելով, թրթուր-
ները ուտում են միսը և սերմերը, որից հետո պտուղները
թափվում են: Թրթուրը լրիվ դարգանալու համար մտնում է
երկրորդ պտղի մեջ: Իսկ եթե նա պտղի հետ դետին է
ընկնում, իսկույն դուրս է գալիս նրա միջից և ծառի բնի
վրայով բարձրանում սաղարթը և մտնում մի ուրիշ պտղի
մեջ:

Առաջին գեներացիայի թրթուրների վնասից թափված
պտուղները բոլորովին անպետք են օգտագործման համար:
Պտուղների վարակման չափը 1-ին գեներացիայի թրթուրներից
սովորաբար հասնում է 25-30 տոկոսի:

Առաջին գեներացիայի թրթուրները, լրիվ հասունանալուց
հետո, դնում են ծառի բնի կիսապոկ կեղևների տակ, կամ այլ
հարմար տեղերում բոժոժավորվելու, որտեղ և տեղի է ունենում
նրանց հարսնեկավորումը: Հարսնեկավորումից 7-8 օր հետո
թռչում են երկրորդ գեներացիայի թիթեռները, որոնք 6-7 օր
հետո սկսում են ձվադրումը:

Երկրորդ գեներացիայի թիթեռները իրենց ձվերը դնում

են գլխավորապես փայլուն պտուղների վրա: Մեկ շաբաթից
 հետո ձվերից դուրս են գալիս թրթուրներն ու մտնում պտուղ-
 ների մեջ, հենց այնտեղից, որտեղ դրված է ձուռն, կամ պտղա-
 կոթունի կողմից: Երկրորդ գեներացիայի թրթուրներն իրեց զար-
 գացման ընթացքում փչացնում են մեկից երկու պտուղ: Թրթուր-
 ները պտուղների մեջ են մնում 20-25 օր: Այն պտուղները,
 որոնց կորիզը կամ սերմերը կերված են, անմիջապես թափ-
 լում են: Երկրորդ գեներացիայի կողմից հասցրած վնասը առա-
 ջին գինեւրացիայի հասցրած վնասի համեմատությամբ ավելի
 մեծ է, համարյա կրկնապատիկ: Թրթուրները լրիվ հասունանա-
 լուց հետո կամ պտղի հետ ընկնում են գետին, կամ ծառի բնի վրա-
 յով իջնում են ներքև, մտնում կեղևների տակ ու բոժոժավորվում:
 Իսկ նրանք, որոնք ընկել են պտղի հետ միասին, դուրս են գալիս
 պտղի միջից, նորից բարձրանում բնի վրա, կամ այլ համա-
 պատասխան տեղերում բոժոժավորվում: Մի քանի օրից հետո
 բոժոժների մեջ թրթուրները հարսնեկավորվում են և այդ
 հարսնյակներից, 5-7 օր հետո, թռչում են երրորդ գեներացիայի
 թիթևները, որոնք նույն կարգով ձվադրում են պտուղների
 վրա և ձվից դուրս եկած թրթուրները փչացնում են արդեն հա-
 սունացած պտուղները: Հասունացած թրթուրները տեղերում բո-
 ժոժների մեջ են մտնում և ձմեռում մինչև գարուն: Դրա համար էլ
 ՀՍՍՌ-ի այն շրջաններում, որտեղ պտղակերը տալիս է երեք գե-
 ներացիա, խնձորենուց և սերկևիլուց համարյա ապրանքային
 բարձր որակով բերք չեն ստանում: Իսկ այն շրջաններում,
 որտեղ պտղակերը զարգանում է մեկ գեներացիայով, նրա հաս-
 ցրած վնասը անհամեմատ քիչ է:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Պտղակերի դեմ հաջող պայքարելու համար պետք է պլա-
 նային կարգով և ժամանակին գործադրել պայքարի միջոցա-
 ռումների կոմպլեքսը, կապված նրա գեներացիաների թվի և զար-
 գացման առանձնահատկությունների հետ: Պայքարի միայն մի
 մեթոդով սահմանափակվել հնարավոր չէ: Պտղակերի դեմ նախքան
 պայքարի քիմիական, ազրոտեխնիկական, մեխանիկական և
 բիոլոգիական մեթոդները գործադրելը, պետք է ճիշտ ընտրել
 պայքարի այս կամ այն միջոցառումի կիրառման ժամկետերը:
 Դրա համար անհրաժեշտ է անընդհատ, սխտեմատիկորեն

հետևել պտղակերի դարգացման ընթացքին, պարզելու՝ թիթեո-
ների մասսայական թռիչքը, ձվադրման, ձվերից թրթուրների
դուրս գալու ժամկետերը, պտղաթափի սկսվելը և այդ ամենը
կրկնել յուրաքանչյուր գեներացիայի նկատմամբ:

1. Պտղակերի դեմ պայքարի քիմիական մեթոդը ամենա-
հիմնականն է: Նրա ժամանակին և ճիշտ գործադրումը կարող
է 70-80 տոկ. պահասեցնել պտուղների վնասվածությունը:
Չվից նոր դուրս եկած թրթուրների դեմ պետք է կիրառել ադի-
քային թույներ: Ադիքային թույներով առաջին սրսկումը պետք է
կատարել ծաղկի պսակաթերթերը թափվելուց անմիջապես հետո:
Սրսկման համար վերցնել մեկ լիտր ջրին 1,5-2 գրամ փարի-
զյան կանաչ և 3-4 գրամ չհանգած կիր:

Հաջորդ սրսկումը պետք է կատարել առաջին սրսկումից
10-15 օր հետո: Սրսկումը պետք է կատարել այնպես, որ թու-
նավոր հեղուկը հավասարաչափ թափվի բոլոր պտուղների վրա:
Այն շրջաններում, որտեղ պտղակերը տալիս է երեք գեներացի-
այա, սրսկումները պետք է շարունակել ամառը. սրսկումը կրկն-
նել յուրաքանչյուր 10-15 օրը մի անգամ, ամբողջ ամառը՝
5-6 անգամ:

Պտղակերի առաջին գեներացիայի դեմ կարելի է սրսկել նաև
1 տոկոս լուտոթյամբ տրանսֆորմատորային յուղի կավային
էմուլսիա, իսկ երկրորդի դեմ՝ 1 տոկ. տրանսֆորմատորային յու-
ղով, կամ 2 տոկ. գիդելային յուղով:

2. Որդնած պտուղների պտղաթափից առաջ ծառերի բնե-
րը և գլխավոր ճյուղերը մաքրել կիսապոկ, չոր կեղևներից և
կապել որսող գոտիներ: Որսող գոտիները կարելի է պատրաս-
տել ծղոտից, բարակ տաշեղներից, ճիլոպից, թղթից, հին պար-
կերից և ուրիշ նյութերից: Վերջին ժամանակներս գործադրում
են նաև քիմիական-բետանաֆտոլային որսող գոտիներ: Այն
վայրերում, որտեղ պտղակերը տալիս է մեկ գեներացիա՝ հա-
սարակ որսող գոտիները ծառերի բներին կապել հունիսին և
աշնանը հավաքել ու ոչնչացնել (այրել): Այն շրջաններում,
որտեղ պտղակերը տալիս է երկու և ավելի գեներացիա, որսող
գոտիները ծառերին պետք է կապել հունիսի սկզբին և յուրա-
քանչյուր 8-10 օրը մեկ անգամ ստուգել գոտիները ու ոչնչաց-
նել այնտեղ հավաքված պտղակերի թրթուրներին և հարսնյակ-

ներին: Եթե ծղոտից պատրաստված որսող գոտիներում հավաքվել
 են շատ թրթուրներ և հարսնյակներ, կարելի է այլևս և նրանց
 տեղը նոր որսող գոտիներ պատրաստել: Իսկ երբ գոտիները
 հին պարկերից են, 8-10 օրը մեկ անգամ պետք է դրանք մտցը-
 նել եռացող ջրի մեջ, որից հետո քամել, հովացնել ու նորից
 կապել ծառի բնին: Քիմիական որսող գոտիներ կարելի է կա-
 պել մեծահասակ (20—25 տարեկան) ծառերին: Քիմիական գո-
 տիների վրա հավաքված թրթուրները բևտանաֆտոլի ներդոր-
 ծությամբ ոչնչանում են և նրանց հարսնյակներից այլևս թի-
 թեռներ չեն դուրս գալիս: Բևտանաֆտոլային որսող գոտի պատ-
 րաստելու համար պետք է վերցնել վաթեթաթուղթ, այն մի
 քանի անգամ ծալել 8—10 ան լայնությամբ և թաթախել
 բևտանաֆտոլի և հանքային յուղի խառնուրդի մեջ: Խառնուրդը
 ստացվում է 1 մաս բևտանաֆտոլի և երկու մաս մեքենայի յուղի
 լուծույթով: Սկզբում թուղի ամանի մեջ լցնել յուղը և նրա
 մեջ գցել բևտանաֆտոլը ու տակը թույլ կրակ վառել: Պետք է
 զգուշ լինել, որ կրակը ուժեղ չլինի և ամանի միջի յուղը չբռնկ-
 վի: Դրա համար յուղը ամանի մեջ պետք է լցնել նրա ծավա-
 լի մեկ երրորդի չափով: Երբ բևտանաֆտոլը կլուծվի յուղի մեջ,
 պատրաստած թղթի գոտիները երկու անգամ մտցնել տաք
 խառնուրդի մեջ և դուրս հանել, որից հետո այդ խառնուրդով
 ներծծված թղթե գոտիները թելով ամուր կապել ծառի բներից
 և գլխավոր ճյուղերի հիմքից: Թելը թղթի գոտու վրա պետք է
 կապել վերին եզրից մի երկու սանտիմետր ցածր: Այդպիսի
 գոտիները դործում են երեք ամիս անընդհատ:

3. Հավաքել որդնած-թափված պտուղները և այդուց
 անմիջապես դուրս տանել: Թափված պտուղները պետք է հա-
 վաքել ամեն օր վաղ առավոտյան և ցերեկը՝ երկու երեք անգամ:
 Պտուղները պետք է հավաքել անցքեր, ճեղքեր չունեցող արկղնե-
 րի մեջ: Չի թույլատրվում պտուղները թողնել ծառերի տակ
 և մի քանի ժամից հետո միայն լցնել արկղների մեջ: Արկղնե-
 րի մեջ հավաքված պտուղները պետք է այդուց դուրս տանել
 և օգտագործել: Եթե արկղները հավաքում են բարակների կամ
 նավեսների տակ, պետք է այդ տեղերում ստեղծել արհեստական
 որսող միջավայր՝ ծղոտ, բարակ տաշեղ, հին մեշոկներ, ճիլոպ
 և այլ նյութեր դնելով: Հաճախակի նայել այդ նյութերը և
 նրանց մեջ հավաքված թրթուրներին ոչնչացնել:

4. Վերջին տարիներս, Հայրենական պատերազմից առաջ, Արիմուժ, Սդրբեջանում պտղակերի դեմ մեծ հաջողութեամբ դործագրվում էր բիոլոգիական պայքար, բայց թողնելով տրիխոդրամա պարազիտ միջատը, որը իր ձուռն դնում է պտղակերի ձվի մեջ: Պարազիտով վարակված պտղակերի ձուռն դորշանում է և նրանից այլևս պտղակերի թրթուր դուրս չի գալիս, այլ դուրս է թռչում պարազիտ տրիխոդրաման, որը նույնպես շարունակում է վարակել պտղակերի դրված ձվերը: Պտղակերի թիթեռների ձվադրման շրջանը տևում է մոտ մեկ ամիս, դրա համար էլ պարազիտ տրիխոդրաման բայց են թողնում մի քանի անգամ: Տրիխոդրաման արհեստական կղանակով բազմացնում են հատուկ լաբորատորիաներում: Սյուպիսի լաբորատորիա կարող է սարքավորել յուրաքանչյուր կոլխոզ կամ սովխոզ:

5. Պտղակերի հասցրած վնասը նվազեցնելու համար մեծ նշանակություն ունի համեմատաբար դիմացկուն սորտերի ընտրությունը և պտղատու ծառերի ճիշտ ուստնացումը: Ռայոնացման ժամանակ ընտրատմական, տնտեսական ֆակտորների հետ միասին պետք է հաշվի առնել նաև վնասատուների և հիվանդությունների վնասի չափը և այդ վնասատուների դեմ կղած պայքարի էֆեկտիվությունը:


ԽՆՁՈՐԵՆՈՒ ՍՂՈՅՈՂ (яблонный пилильщик)

Հասուն սդոցողը ունի 6-7 մմ երկարություն, մարմինը ներքևից դեղնագույն է, իսկ վերևից՝ դորշ-սևագույն: Թրթուրը բաց-դեղնավուն է կամ սպիտակ, մարմինը՝ կնճռոտ, ունի 3 գույք խկական և 7 գույք կեղծ ոտքեր:

Թրթուրի գլուխը սև է, երկարությունը 11-12 մմ (տես նկ. 10):

Հասուն թրթուրները ձմեռում են հողում, հողից պատրաստած օրրանների մեջ 5-15 սմ խորություն վրա: Թրթուրի հարսնեկավորումը կատարվում է վաղ գարնանը: Հարսնյակներից հասունների թռիչքը տեղի է ունենում խնձորենու ծաղկման նախօրյակին: Հասունների ձվադրման շրջանը համընկնում

է ծաղկակոկոնների լրիվ կազմակերպմանը կամ ծառի ծաղկման
 սկզբին: Էդը ձուռն դնում է ծաղկապայտանի հյուսվածքի մեջ,
 կամ բաժակի հիմքում: Նախքան ձվադրելը, էդը ձվադիրով սղո-
 ցում է բաժակը և փոքր անցք բացում, որի մեջ դնում է ձուռն:
 Ձվադրումից 6-7 օր հետո նրանից դուրս է գալիս թրթուրը և
 բաժակաթերթերի տակից ոլորապտույտ անցք է փորում
 պտղի կեղևի տակ: Մաշկափոխությունից հետո, թրթուրը գի-



Նկ. 10. Խնձորենու սղոցողը, թրթուրը և վնասվածքը:

շերն անցնում է հաջորդ մասիկ պտղի մեջ, բացելով ուղիղ անցք
 դեպի սերմնատուներ և սնվում սերմերով: Թրթուրն իր զարգաց-
 ման 20-30 օրվա ընթացքում վարակում է 2-3 պտուղ: Վարակ-
 ված պտուղները թափվում են: Սղոցողի թրթուրի վնասած պտուղ-
 ղը պտղակերի վնասածից կարելի է տարբերել նրանով, որ սղո-
 ցողի թրթուրը ուտում է ամբողջ սերմերը և քայքայում սերմնա-
 տուներ: Սղոցողի թրթուրի կղկղանքից փայտոջիլի հոտ է գալիս:
 Սղոցողի թրթուրի կղկղանքը թաց է և, վերջապես, սրա թրթուրը
 ավարտում է իր գործունեությունը այն ժամանակ, երբ պտղա-
 կերի թրթուրը նոր միայն սկսում է մտնել պտղի մեջ:

Պտղակերի թրթուրը վարդագույն է ու մեծ, հաստ և մսա-
 լի, ունի 8 գույգ ոտքեր: Իսկ սղոցողի թրթուրը սպիտակ է,
 բարակ ու երկար, կնճռոտ մարմնով և ունի 10 գույգ ոտքեր:

Սղոցողի թրթուրից վնասված պտուղը չի փառում: Սղոցողի թրթուրները հասունանալով, պտուղների հետ միասին ընկնում են գետին, ուր պտղից դուրս գալով մտնում են հողի մեջ: Թրթուրների մասսայական կոկոնավորումը կատարվում է խնձորենու ծաղկելուց 2-3 շաբաթ հետո:

Կոկոնի մեջ թրթուրը մնում է մինչև հաջորդ գարունը: Տարեկան տալիս է մեկ գեներացիա:

Խնձորենու սղոցողը լայն չափով տարածված է ՍՍՌՄ-ի հարավային շրջաններում և ՀՍՍՌ-ի տաք շրջաններում: Մասսայական բազմացման տարիներին նա վնասում է պտուղների 40-50 տոկոսը: ՀՍՍՌ-ի պայմաններում՝ սովորաբար խնձորենու սղոցողը մեծ քանակությամբ չի բազմանում:

ՏԱՆՁԵՆՈՒ ՍՂՈՑՈՂԸ

ՀՍՍՌ-ի պայմաններում, հատկապես Արարատյան դաշտում, Մեղրիում, Ղափանում, Աշտարակում, Իջևանում, Նոյեմբերյանում և որոշ չափով էլ նախալեռնային շրջաններում ավերիչ դեր է կատարում տանձենու սղոցողը: Մեր 10 տարվա դիտողութունները ցույց են տվել, որ ամեն տարի տանձենու բերքի 50-60 տոկոսը, որոշ տարիներ 70-90 տոկոսը, իսկ որոշ այգիներում ամբողջ բերքը ոչնչացվում է տանձենու սղոցողի կողմից: Սղոցողն ամեն տարի մեծ մասս է պատճառում հին և անմշակ այգիներին:

Տանձենու սղոցողը մի քիչ փոքր է խնձորենու սղոցողից. նրա երկարութունը 5-6 մմ է: Հասուն միջատի գլուխը, բեղիկները, կուրծքը կարմրավուն են: Փորը ներքևից դեղնավուն է, իսկ վերևից թրթուրը շատ նման է խնձորենու սղոցողի թրթուրին: Կյանքի զարգացման ցիկլը շատ նման է խնձորենու սղոցողին:

Հասուն թրթուրը ձմեռում է հողում, նրանից պատրաստած ամուր կոկոնում:

Գարնանը, տանձենու տերևաբողբոջների բացման շրջանում, թրթուրները հարսնեկավորվում են, իսկ ծաղկման նախօրյակին նրանցից դուրս են թռչում հասունները: Էգերը ձու են դնում են ծաղկակոկոնի կամ ծաղկի բաժակների հիմքում: 5-6 օր հետո ձվերից դուրս են գալիս թրթուրները և ուղիղ անցք բաց անելով՝ բաժակից ներս մտնում նոր կազմակերպված պտղի մեջ:

Թրթուրն ուտում է պտղի միջուկը և սերմերը. գիշերն անցնում է հաջորդ, մոտիկ գտնվող պտղի մեջ: Մինչև թրթուրի լրիվ զարգանալը, նա փչացնում է 2-3 պտուղ: Վերջին պտղի հետ ընկնում է գետնի վրա, դուրս գալով մտնում հողի մեջ ու հողից պատրաստում ամուր բոժոժ, որի մեջ էլ ձմեռում է: Տարեկան տալիս է մեկ սերունդ: Նկատված է, որ տանձենու սղոցողը կարող է բազմաձև կուսածնությամբ (պարթենոգենեզիս): Տանձենու սղոցողի թրթուրների մասսայական բոժոժավորումը կատարվում է մայիսի վերջերից: Վարակված պտուղները մասսայաբար թափվում են, երբեմն դեռ բաժակները չգցած հասակում: Բոլորից շատ տուժում են մեր տեղական վաղահաս սորտերը, հատկապես մալաչան: Չմեռային սորտերը քիչ են վնասվում:

✓ ✓
ՊԱՅԲԱՐԻ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Սղոցողների դեմ պայքարի գլխավոր մեթոդը ագրոտեխնիկական միջոցառումներն են: Քանի որ սղոցողի թրթուրները դեռ հուլիս ամսից բոժոժավորվում են հողի մեջ 5-15 սմ խորության վրա, ուստի ամառվա ընթացքում միջշարքային տարածությունների կանոնավոր մշակումը և սև ցելի տակ պահելը, հաճախակի փխրացնելը կործանիչ ազդեցություն է թողնում թրթուրների վրա: Ավելի կործանիչ ազդեցություն է թողնում միջշարքային տարածությունների ուղ աշնանային և վաղ գարնանային վարը, կամ փորելը և ջրելը: Մեծ նշանակություն ունի նաև մուլախոտերի սխտեմատիկ ոչնչացնելը:

2. Սղոցողի թրթուրի վնասած թափված պտուղները անմիջապես հավաքել և տեղում ոչնչացնել, որով կոչնչացվեն պտուղների մեջ գտնվող թրթուրները:

3. Սրակել աղիքային թույներով: Ծաղկաթափումից հետո անմիջապես սրակել փարիզյան կանաչի 0,1 տոկ. սուսպենզիայով, խառնելով կրկնակի քանակությամբ չհանգած կիր:

ՏԱՆՁԵՆՈՒ ՌԻՆԽԻՏԸ
(Գլխափողիկ)

Հասուն բզեզը 10-12 մմ է, մետաղական կանաչ գույնի: Վերնաթևերի վրա ունի մի քանի շարք խոր փոսիկներ: Թըր-

W

Թուրք անտաք, աղեղնաձև ու մաալի է: Չուս կլոր է և սալտակ-
 Բզեղը ձմեռում է հողում, հողից պատրաստած բոժոժների
 մեջ: Գարնանը մյուս երկարակնճիթ ախիսիտների հետ միասին
 ծառ է բարձրանում և սնվում՝ բողբոջներով, ծաղկակոկոններ-
 րով և պտուղներով: Պտուղներով կերակրվելու ժամանակ բզեղն
 իր երկար դնչիկով տարբեր ուղղությամբ ոլորուն ակոսներ է
 բացում, ուտելով պտղի մաշկը և միսը: Չվաղրման շրջանում
 ծակում է տանձենու կամ խնձորենու պտուղները ու ձու դնում
 նրանց մեջ: Երբեմն պատահում է, որ մի պտղի մեջ դնում է
 մի քանի ձու: Պտուղը, բզեղի ծակելու հետևանքով, քարանում,
 կնճռոտվում ու թառամում է: Չվաղրումից հետո բզեղը կրծում
 է պտղի կոթունը, որից պտուղը շուտով թափվում է: Թափ-
 ված պտուղների հետ միասին 3-4 շաբաթ հետո թրթուրներն
 ընկնում են դեռնի վրա: Թրթուրները դուրս են գալիս պլա-
 ղից, մտնում հողի մեջ և հարսնեկավորվում: Թրթուրների հարս-
 նեկավորումը երբեմն կատարվում է այդ պտուղների մեջ: Ամա-
 ուր հարսնյակներից դուրս են գալիս բզեղներ և մնում են հողի
 մեջ մինչև գարուն: Տարեկան տալիս է մեկ գեներացիա: Տան-
 ձենու ախիսիտը շատ տարածված է Նոյեմբերյանի, Իջևանի,
 Ալավերդու շրջաններում: Արարատյան դաշտում հանդիպում է
 սակավ:


ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Վաղ գարնանը, մինչև ծաղկելը և ծաղկելուց հետո, ծա-
 ուերը թափ տալ սավանների վրա՝ 3-ից 4 անգամ:
2. Ծաղկելուց մեկ շաբաթ հետո ծառերը սրսկել կամ փո-
 շտակ աղիքային թույներով:
3. Հավաքել թափված պտուղները և ոչնչացնել:
4. Ամառը և աշնանը վարել կամ փորել միջշաբաթյան
 տարածությունները:

Բ Ո Ւ Կ Ա Ր Կ Ա (букарка)

Բուկարկան պատկանում է խնձորենու ծաղկակերի ու կա-
 ղարկայի խմբին: Փոքր, մոտ 3 մմ երկարությամբ մուգ-կա-


պուշտ գուշնի բղեղ է (տես նկ. 11): Մարմինը՝ պատած է գորշ գուշնի երկար մազմզուկներով:



1



2



3



4



5

Նկ. 11. Բուկարկա. 1) թրթուրը, 2) հարսնյակը, 3) բղեղը, 4 և 5) վնասվածքը՝ Բուկարկան վնասում է խնձորենու, տանձենու, բալինու, կեռասենու: Լինում է նաև վայրի թվուտների և ալոճենու վրա:

Հայաստանում տարածված է Ստեփանավանի և նրա հարևան շրջաններում:

Հասուն բզեզները ձմեռում են հողի ձեղքերում, թափված քների տակ: Վաղ դարնանը ծաղկակերի, կազարկայի և ուրիշ երկարակենճիթ բզեզների հետ բարձրանում է սաղարթի վրա ու սնվում բողբոջներով: Հաշված է, եթե մի ծառի վրա լինի 200-300 բզեզ, նրանք կարող են 100 տոկոս ոչնչացնել պտղաբողբոջները, հետևապես նաև ամբողջ բերքը: Երբ սկսում են զարգանալ ծաղկակոկոնները, բուկարկան սնվում է նրանցով:

Բուկարկան ձուն դնում է տերևակոթունի կամ տերևի կենտրոնական ջղի մեջ. մեկ շաբաթից հետո, ձվից դուրս է գալիս թրթուրը, որը տերևակոթունի միջով ուտելով, շարժվում է դեպի տերևի թիթեղի գլխավոր ջիղը: Թրթուրն ուտում է կոթունի և ջղի միջի սննդարար և ջրատար անոթները, որի հետևանքով տերևը թառամում է, դեղնում ու թափվում:

Թրթուրը տերևի հետ միասին, ընկնելով հողի վրա, դուրս է գալիս նրա միջից և մտնում հողի մեջ: Այնտեղ, մոտ 10 սանխորուժյան վրա, հողից պատրաստում է բոժոժ և նրա մեջ հարսնեկավորվում: Հարսնյակի շրջանը տևում է 10-15 օր, որից հետո դուրս են գալիս բզեզները ու մնում հողի մեջ մինչև դարուն: Պատահում են դեպքեր, երբ հարսնյակներից դուրս եկած բզեզների մի մասը բարձրանում է ծառ և նորից մասնակի վնաս պատճառում:

Բուկարկայի մասսայական բազմացման տարիներին, մայիս ամսում, ծառերի բոլոր տերևները թափվում են, որը անվանում են «Գարնանային տերևաթափ»: Բացի այդ, նա լուրջ վնաս է պատճառում բողբոջներին և ծաղկակոկոններին:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Քանի որ բուկարկան իր զարգացման ցիկլով շատ նման է խնձորենու ծաղկակերին, ուստի նրա դեմ պայքարի միջոցառումները նույնն են, ինչ որ ծաղկակերինը:

Դրանից բացի, պետք է բուկարկայի դեմ կիրառել հետևյալ լրացուցիչ միջոցառումները՝ դարնանը հավաքել թափված տերևները և ոչնչացնել. վաղ դարնանը ծառերը փոշոտել ԴԴՏ-ի 5

տոկ, դուստով, տերևաթափից հետո փխրացնել միջշարքային
տարածությունները և ջրել:

ԽՆՁՈՐԵՆՈՒ ԲՐԴԱՊԱՏ ԼՎԻՃ (КРОВЯНАЯ ПЛЯ)

Բրդապատ լվիճը խնձորենու լուրջ և վտանգավոր միա-
սատուներից է: Տարածված է ՍՍՌՄ-ի հարավային տաք
շրջաններում, որտեղ ձմեռը խիստ սառնամանիք չի լի-
նում: Որպես վնասատու, տարածված է Սև ծովի ափերին, Ադրբ-
բեջանում, Հայաստանում (Ալավերդում, Նոյեմբերյանի, Իջևա-
նի, Դիլիջանի, Շամշադինի, Կիրովականի, Ստեփանավանի և
Գորիսի շրջաններում):

Բրդապատ լվիճը սնվում է միայն խնձորենու հյութով:
Նա փոքր, 1,5-2 մմ մեծությամբ միջատ է, մարմինը ծածկված
է սպիտակ, երկար ու խիտ մոմե մազիկներով:

Բրդապատ լվիճն ունի ծակող, ծծող ախյի բերան և երկար
կնճիթ, որը մտցնում է խնձորենու ճյուղերի, բնի կեղևի մեջ ու
ծծում նրանց մեջ եղած սննդարար հյութը: Ծծելու ժամանակ
բույսի հյուսվածքների մեջ թափվում են այնպիսի նյութեր, որոնք
գրգռում են կեղևի հյուսվածքների ըջիջները, որի հետևանքով
վերջիններիս արագ բազմանում են և կուտակվելով միմյանց վրա
առաջացնում խոցեր, ուռուցքներ: Ճյուղերի վրա առաջացած
ուռուցքները քանի գնում մեծանում և շատանում են: Այդ ու-
ռուցքները խանգարում են ճյուղի մեջ կատարվող նյութերի
շարժմանը, որի հետևանքով ճյուղերը սկսում են չորանալ: Բըր-
դապատ լվիճով վարակված ծառերը մի քանի տարվա ընթաց-
քում չորանում և շարքից դուրս են գալիս:

Բրդապատ լվիճը ձմեռում է թրթուրի կամ հասուն միջա-
տի ստադիայում, ծառի կեղևների ճեղքերում, խոցերի և ու-
ռուցքների վրա, փշակներում, արմատավղիկի մաս: Չմեռող
լվիճների մեծ մասը ոչնչանում է ցրտից, մնում են կենդանի
այն լվիճները, որոնք ավելի ապահով տեղ են ձմեռել: Գարնա-
նը, երբ խնձորենու մեջ սկսվում է հյութաշարժությունը, նը-
րանք սկսում են սնվել և բազմանալ: Բրդապատ լվիճը բազ-
մանում է կուտածնությամբ՝ (առանց բեղմնավորվելու) կեն-
դանի ձագեր ծնելով: Տարեկան տալիս է 10-15 գեներացիա

(սերունդ): Իրա համար էլ նրանք ծառերի վրա արագ շատա-
նում և կաղնում են մեծ գաղութներ: Ծառերի վրա լվիճների
գաղութները կարծես բամբակի քուլաներ լինեն: Ամառվա կե-
սերից հետո լվիճների մի մասն իջնում է խնձորենու արմատ-
ների վրա և այնտեղ տալիս մի քանի գեներացիա:

Բրդապատ լվիճը չվարակված շրջանների համար հանդի-
սանում է կարանտինի օրեկա:

ՊԱՅԹԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Բրդապատ լվիճի դեմ դործադրվող պայքարի քիմիական,
ադրոտեխնիկական և մեխանիկական մեթոդներն այնքան էլ
էֆեկտ չեն տալիս, որովհետև բրդապատ լվիճի մարմինը ծածկը-
ված է երկար ու խիտ մոմաթելիկներով, որը թույլ չի տալիս
սրսկած կոնտակտ թույլները նրա մարմնի վրա թափվելու: Բա-
ցի այդ, նա բաղմանում է նաև արմատների վրա, ուր հնարա-
վոր չէ կոնտակտ թույլներով պայքարել: Կոնտակտ թույլները,
էմուլսիաները լավ են ազդում լվիճի առաջի և երկրորդ հասա-
կի թրթուրների վրա: Իրա համար էլ կարելի է խորհուրդ տալ
լվիճների գաղութների վրա սրսկել հետևյալ բաղադրությունները՝

1. Աշնանը տերեաթափից հետո, սրսկել 8-10 տոկ. խտու-
թյամբ հանքայուղային էմուլսիաներ:


2. Ամառը լվիճների գաղութների վրա սրսկել անարազին
սուլֆատ, վերցնելով՝ 1 լ. ջրին 5 գրամ անարազին սուլֆատ
և կրկնակի քանակությամբ՝ 10 գր չհանգած կիր:

3. Արմատի վրա դռնված լվիճների գաղութների վրա
լցնել անարադուստ կամ նիկոդուստ, ու բահով խառնել 20-25
սմ խորությամբ:

4. Լավ էֆեկտ է տվել բրդապատ լվիճի դեմ դործադրված
աֆելինուս պարազիտը: Այդ պարազիտը շատ փոքր միջատ է.
նա լվիճին ոչնչացնում է նրա մարմնի մեջ ձու դնելու միջո-
ցով (տես նկ. 12):

Պարազիտը ձու է դնում լվիճի մարմնի մեջ. մի քանի
օրից հետո այդ ձվից դուրս է գալիս պարազիտի թրթուրը և
ուտում լվիճի ներքին օրգանները: Թրթուրը հասունանում է ու
հարսնեկավորվում լվիճի մարմնի մեջ: Հարսնեկավորումից 7-8 օր

հետո լվիճի մարմնից դուրս է թռչում հասուն սլարազիտը և ձվադրում կատարում մյուս լվիճների մեջ: Այդուամարագ բազմանալով՝ սլարազիտը ոչնչացնում է լվիճների գաղութները:



Նկ. 12. Աֆելինուսը ձու է դնում բրդապատ լվիճի մեջ (ըստ Մարշալի):

Այդ սլարազիտը ՍՍՌՄ (Ադրբեջան) է բերվել 1926 թվին: 1931 թվին այդ սլարազիտով վարակվեցին Արիմի այգիները. 1936 թվին միջատաբան Հ. Ավետյանի նախաձեռնությամբ այդ սլարազիտը փոխադրվեց ՀՍՍՌ-ի վարակված շրջանները: Աֆելինուս սլարազիտը ՀՍՍՌ-ի սլայմաններում լավ դարգանում է և թույլ չի տալիս, որ բրդապատ լվիճը բազմանա ու մեր խնձորենիների մնաս պատճառի: Աֆելինուսը լավ է ֆեկտ է տվել նաև Արիմում, Վրաստանում, Միջին Ասիայում: Աֆելինուսի փոխադրումը և այգիները նրանով վարակելը շատ հեշտ է: Դրա համար պետք է աֆելինուսով վարակված լվիճների գաղութը, խնձորենու ճյուղի հետ միասին, տանել ու կախել չվարակված խնձորենու ճյուղերից. հետագայում նա ինքն իրեն կբազմանա և կտարածվի շրջապատի այգիներում ու կոչնչացնի բրդապատ լվիճի գաղութները:

ԽՆՁՈՐԵՆՈՒ ԿԱՆԱԶ ԼՎԻՃ

Խնձորենու վրա զարգանում են մի քանի տեսակի լվիճներ, որոնցից լայն չափով տարածված է խնձորենու կանաչ լվիճը (տես նկ. 13):



Նկ. 13. Խնձորենու լվիճը:

Խնձորենու լվիճը լինում է նաև տանձենու, սերկելու և ուրիշ շատ բույսերի վրա: Չմեռում է ձու ստադիայում, խնձորենու բարակ ճյուղերի վրա: Չվերը սև փայլուն գույնի են, ընդամենը 0,6-0,8 մմ: Գարնանը ձմեռող ձվերից դուրս են գալիս լվիճները և սկսում են ծծել մատղաշ շվերի և տերևների հյութը: Լվիճները ձվերից մասսայաբար դուրս են գալիս ծառերի բողբոջների բացվելու շրջանում: Այնուհետև, նրանք արագ բազմանում են կենդանի ձագեր ծնելով: Մի լվիճը կարող է ծնել 50-60 թրթուր: Բազմանում են շատ արագ. 12-18 օրը մեկ անգամ մեկ սերունդ են տալիս: Տարեկան տալիս են 12-14 սերունդ: Երկրորդ կամ երրորդ սերունդից հետո հանդես են գալիս թևավոր էգերը և տարածվում մյուս ծառերի վրա: Այնուհետև հանդես են գալիս արուն և էգը, որոնք բեղմնավորվելուց հետո ձվադրում են ճյուղերի վրա ու իրենք ոչնչանում են: Խնձորենու լվիճը ամբողջ տարին զարգանում է խնձորենու վրա, շատ վատ է պատճառում երիտասարդ ծառերին՝ ծծելով նրանց տերևների և դալար շվերի հյութը: Նա հանդիսանում է տնկարանների գլխավոր վնասատու: Տնկարանի մատղաշ տնկիների վրա արագ բազմանալով ծծում է տերևների և շվերի հյութը: Լվիճների ծծելուց՝ տերևները կոչ են գալիս, դանդաղանում և չորանում են: ՀՍՍՌ-ի պայմաններում խնձորենու լվիճը արագ բազմանում է նախալեռնային և լեռնային շրջաններում:

ՊԱՅԲԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Վաղ գարնանը լվիճների գաղութների վրա սրակել կոնտակտ թռչներ, վերցնելով 1 և ջրին 2 դրամ նիկոտին սուլֆատ և 3 դրամ հեղուկ օձառ:

2. Աշնանը, տերեւաթափից հետո, սրսկել 10 տոկոսի հանքայուղային էմուլսիա կամ 3 տոկ. ենթօճառային սուղակ կամ 7—8° խտության կալցիումի պոլիսուլֆիդի լուծույթ:


3. Ծառերի վրայից կտրել խիստ վարակիված ճյուղերի ծայրերը և լվիճների գաղութները ոչնչացնել:

ՏԱՆՁԵՆՈՒ ՊՍԻԼԱ.

(տերեւալու.)

Հասուն միջատը 3 մմ է: Մարմինը գորշ-կարմրավուն կամ գորշ-դեղնավուն գույնի: Բեղիկները 10 հատվածանի, ծայրի հատվածը՝ երկու խողանիկով: Աչքերը կարմրադարչնագույն են: Փորի վրա ունի լայնահասն ու շերտեր: Թևերը թափանցիկ են և լավ զարգացած:

Թրթուրների մարմինը տափակ է և փորը՝ դեղին:



Նկ. 14. խնձորենու պսիլա:

1) հասուն, պսիլա 2) նիմֆա, 3) թրթուրը, 4) ձվերը ճյուղի վրա:

Տանձենու պսիլան տարածված է գլխավորապես ՍՍՌՄ-ի հարավային մարզերում: ՀՍՍՌ-ում որպես վնասատու հանդես է գալիս նախալեռնային շրջաններում՝ Իջևանում, Նոյեմբերյանում և այլ շրջաններում:

Հասուն պսիլան ձմեռում է թափված տերևների տակ, ծառի բնի, ճյուղերի կիսապոկ կեղևների տակ կամ ճեղքերում, մոլախոտերի տակ և այլն: Վաղ գարնանը, մարտ ամսին բարձրանում է ծառի սաղարթի վրա և ձվադրում է տանձենու բողբոջների հիմքի ծալքերում, բարակ ճյուղերի վրա: Չվերը շատ փոքր են, դեղնագույն և երկճյուղանի, թելիկանման հավելվածով: Չվերից թրթուրները դուրս են գալիս բողբոջների բացվելու շրջանում: Չվերից դուրս եկած թրթուրները ծծում են բողբոջների գազարթից, իսկ հետագայում՝ ծաղիկների բաժակաթերթերից: Երբ բացվում են տերևաբողբոջները, նրանք անցնում են տերևների վրա և ծծում տերևների հյութը: Ապրիլի սկզբներին, նրանք ուժեղ սնվում են և արտաթորում: Երեք շորս շաբաթից հետո հանդես են գալիս հասունները: Նրանք թևավոր են և լավ ցատկում են մի ճյուղից մյուսը: Էգերը ձուռն դնում են տերևների վերին կամ ներքևի երեսի վրա, գլխավոր ջղի ուղղությամբ: ՀՍՍՌ-ի պայմաններում տանձենու պսիլան տալիս է 3—4, երբեմն 5 դեներացիա:

Տանձենու պսիլան բույսին մաս է պատճառում երկու ձևով: Նախ ծծում է տերևների, դառար Չվերի հյութը և ապա, հատկապես թրթուրային և նիմֆա հասակում, առատությամբ արտաթորում է քաղցր, մածուցիկ, կաշյուռն հյութ (մեղրացող): Այդ քաղցր արտաթորանքով ծածկվում են տերևները, Չվերի ճյուղերի մակերեսը: Մասսայական բաղմացման տարիներին, իրենց արտաթորանքով ծածկում են ամբողջ ծառը: Այդ մածուցիկ արտաթորանքը ծածկում է տերևների հերձանցքները, որի հետևանքով խանգարվում է բույսի ասիմիլացիան (հյութերի փոխանակութունը): Բացի այդ, նրանց քաղցր արտաթորանքի վրա բաղմանում են սնկեր, որի հետևանքով ամբողջ տերևները, ճյուղերը սևանում են: Պտուղները ծածկվելով այդ մածուցիկ արտաթորանքով, կորցնում են իրենց ապրանքային արժեքը: Պսիլաներով ուժեղ վարակված այգիներում, դժվարանում է բանվորների աշխատանքը:

ՀՄՍՌ-ի նախալեռնային շրջաններում, որոշ տարիներ, պսիլան հանդիսանում է տանձենու զլխավոր վնասատու և քերքի հսկայական կորուստների պատճառ է դառնում:

ՊԱՅՔՍՐԻ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Վաղ գարնանը տանձենու ծառերը սրսկել 8—10 տոկ հանքայուղային էմուլսիաներով, կամ 7—8-ի խտությամբ կալցիումի պոլիսուլֆիդի լուծույթով, կամ երկաթարջասպի 10 տոկոսանի լուծույթով:

2. Թրթուրների և նիմֆաների դեմ բողբոջները բացվելու շրջանում սրսկել կոնտակտ թույներ՝ սովորական դոզաներով (1 լ. ջրին՝ 0,3⁰/₀ անաբազին սուլֆ. և օձառ): Նույն թույներով սրսկել բոլոր գեներացիաների դեմ, ամառը 3-4 անգամ:

3. Հասուն պսիլաների դեմ ծխախոտի ծխով պայքարելն անօգուտ է, քանի որ այդ սպասած էֆեկտը չի տալիս:

Ձմեռող հասուն պսիլաներին կարելի է ոչնչացնել աշնանը, ծառերի բները մաքրելուց հետո որսող դոտիներ կապելու և ծառերի բաժակներում և միջշարքային տարածություններում թափված տերևները հավաքելու և այրելու միջոցով: Ցանկալի է աշնանը այդու միջշարքային տարածությունները դնել ցրտահերկի տակ:

4. Միջշարքային տարածություններից ոչնչացնել մոլախոտերը, որպեսզի հասուն պսիլաները նրանց մեջ չթաքնվեն:

ԽՆՁՈՐԵՆՈՒ ՊՍԻԼԱ

Հասունը վառ կանաչ դուշնի է: Թրթուրները տափակ դեղնականաչավուն դուշնի են: Չուն նարնջագույն է:

Չուն ձմեռում է բողբոջների հիմքում: Բողբոջների բացման շրջանում ձվերից դուրս են գալիս տափակ թրթուրները և անցնում տերևների վրա ու ծծում նրանց հյութը: Իր զարգացման ցիկլով և հասցրած վնասի բնույթով նման է տանձենու պսիլային, միայն այն տարբերությամբ, որ սա սեղոնի ընթացքում տալիս է մեկ գեներացիա և ձմեռում է ձու ստադիայում (տես նկ. 14):

ՀՄՍՌ-ի պայմաններում, խնձորենու պսիլան այնքան էլ վնաս չի պատճառում:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ

Չմեռող ձվերը ոչնչացնելու համար, աշնանը, տերևաթափից հետո, կամ դարնանը, մինչև բողբոջների ուռնելը, սրսկել 10 տոկ. երկաթարջասալի լուծույթ, կամ 5—8°-ի խտուժյամբ կալցիումի պոլիսուլֆիդ կամ 8—10 տոկ. կարբուլինեում, կամ 5—7 տոկ. հանքայուղային էմուլսիա:

Թրթուրները ձվերից դուրս գալու շրջանում սրսկել 0,15 տոկոս նիկոտին սուլֆատ, խառնելով 0,4 տոկ. օճառ:

3. Հասուն պսիլաների դեմ կարելի է պայքարել ծխախոտի ծխով: Այդ նպատակով խնձորենու այգու միջշարքային տարածութուններում շախմատաձև դասավորել քիչ խոնավ գամաղբի փոքրիկ կույտեր (մեկ հեկտարին 100 կույտ):

Յուրաքանչյուր կույտի վրա լցնել 2 կգր ծխախոտի փոշի և այրել այն հաշվով, որ կույտերը չբոցավառվեն, այլ միայն ծխեն: Կույտերը դանդաղ վառվելով, առաջացած ծուխը կպատի ամբողջ այգու ծառերը և հասուն պսիլաներին խեղդամահ կանի:

ՏԱՆՁԵՆՈՒ ՏԵՐԵՎԱՅԻՆ ԼՎԻՃՆԵՐ

Տանձենու վրա լինում են մի քանի տեսակ լվիճներ, որոնք բոլորն էլ ծծում են տերևների հյութը: Հատկապես Արարատյան դաշտավայրում և Հայաստանի հարավային շրջաններում (Իջևիկում, Նոյեմբերյանում) սրանք գլխավոր վնասատուներն են համարվում:

Տանձենու լվիճները ունեն 2—3 մմ երկարություն, մուգգորշ գույնի կամ մուգ-կապտավուն են:

Նրանք ձմեռում են ձու ստադիայում, ամառում բարակ ճյուղերի կեղևի ծալքերում: Բողբոջների բացման ժամանակ ձմեռող ձվերից դուրս են գալիս լվիճները և սկսում են ծծել նոր բացվող բողբոջների գաղաթից:

Երբ տերևները դուրս են գալիս՝ լվիճները անցնում են տերևների վրա ու ծծում նրանց հյութը. ծծելու հետևանքով տերևները արագ ոլորվում են: Ոլորված տերևների մեջ նստած լվիճները շարունակում են ծծել նրանց հյութը: Մի քանի օրից հետո տերևները գորշանում ու չորանում են:

Հունիսի վերջերին հանդես են գալիս թևավոր էգերը, որոնք կատարում են միգրացիա (գաղթում են) մոլախոտերի վրա: Ամբողջ ամառը նրանք դարգանում և բազմանում են մոլախոտերի վրա: Աշնանը, երբ ցրտերը ընկնում են, հանդես են գալիս արուն և էգը ու թռչում են նորից տանձենու վրա: Բեղմնավորվելուց հետո, նրանք ձվադրում են տանձենու բարակ ճյուղերի կեղևի ծալքերում ու իրենք ոչնչանում են:

ՊԱՅԻԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Աշնանը, տերևաթափից հետո տանձենին սրսկել 8—9 տոկ. հանքայուղային էմուլսիայով, կամ 7—8⁰ խտության կալցիումի պոլիսուլֆիդի լուծույթով, կամ 3 տոկ. ենթօճառային սուղակի բաղադրությամբ:
2. Գարնանը, բողբոջները բացվելուց և ծաղկելուց անմիջապես հետո, սրսկել կոնտակտ թույներով:
3. Պայքարել այդուժ և նրա շրջապատում տարածված մոլախոտերի դեմ:

ՏԱՆՁԵՆՈՒ ՄԼՈՒԿ

Պատկանում է փայտոշիւների ընտանիքին: Հասուն մլուկի մեծությունը 3 մմ է, մարմինը ապիակ, թևերը ցանցաձև:

Հասուն մլուկը ձմեռում է բուսական մնացորդների, թափված տերևների, կեղևների տակ: Գարնանը բարձրանում է սաղարթի վրա, բեղմնավորվելուց հետո ձվադրում է տերևների ներքին երեսի պարենխիմի մեջ. 20—30 օր հետո ձվերից դուրս եկող թրթուրները ծծում են տերևների հյութը: Սեղոնում ապրիս է երկու-երեք դեներացիա (սերունդ): Մլուկների քանակությունը տանձենու և խնձորենու վրա շատանում է ամառվա երկրորդ կեսին: Նրանց հասցրած վնասն այն է, որ ծծում են տերևների հյութը և իրենց արտաթորանքով կեղտոտում տերևի ներքին երեսը: Նրանց վնասած տերևները իսկույն աչքի են ընկնում մլուկի արտաթորանքի կաթիլների բծերով:

ՊԱՅԻԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Աշնանն աչդին մաքրել բուսական մնացորդներից:
2. Գարնանը և ամառը մշուկների վրա սրսկել կոնտակտ թույներ:

ԴԵՂՁԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Դեղձենու գլխավոր վնասատուները հանդիսանում են լվիճները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ ցողունային լվիճ և տերևային լվիճներ:

ԴԵՂՁԵՆՈՒ ՑՈՂՈՒՆԱՅԻՆ ԼՎԻՃ

Տարածված է ՍՍՌՄ-ի հարավային մասում: ՀՍՍՌ-ում տարածված է Արարատյան դաշտավայրում, Մեղրիում, Ղափահում, Նոյեմբերյանում, Ալավերդում, Աշտարակում և Կոտայքի որոշ գյուղերում: Ցողունային լվիճը հանդիսանում է դեղձենու գլխավոր վնասատուն:

Նա դարձանում է նաև նշենու, ծիրանենու, սալորենու և բալենու վրա, սակայն վերջիններիս վրա մասսայաբար չի բազմանում:

Ցողունային լվիճը համեմատաբար խոշոր է, ունի տանձաձև մարմին, որի երկարությունը 4—5 մմ-ի է հասնում, մուգ-մոխրագույն է: Մեջքի վրա դասավորված են մի քանի շարք սև կետեր: Ունի երկար կնճիթ (տես. նկ. 15):

Զմեռում է ձվի ստադիայում: Գարնանը նշենու ծաղկման ժամանակ (ապրիլի սկիզբներին), ձվերից դուրս են գալիս էգ լվիճները և սկսում են ծծել ճյուղերի և բնի կեղևի հյուսվածք:



նկ. 15. Դեղձենու ցողունային լվիճը:

Գարնանը և ամառվա ընթացքում լվիճը բազմանում է անասն արուների ծնելով կենդանի ձագեր: Մեկ էդը կարող է ծնել 50—60 ձագ:

Հուլիս ամսում հանդես են գալիս թևավոր էդերը, որոնք հանդիսանում են սերունդը տարածողները, այսինքն՝ թռչում են մյուս չվարակիված դեղձենիների վրա և այնտեղ նորից շարունակում են բազմանալ: Հուլիս—օգոստոս ամիսներին նրանց քանակութունը ծառերի վրա այնքան է շատանում, որ լվիճների գաղութները ծածկում են համարյա բոլոր ճյուղերը: Մեկ սեզոնում տալիս է 10 դեներացիա:

Յողունային լվիճը դեղձենու մեծ վնաս է պատճառում, նրանից հսկայական քանակությամբ հյուսթ ծծելու միջոցով: Դեղձենին կորցնելով մեկ սեզոնի ընթացքում դառնի քանակությամբ ածխաջրեր, թուլանում է և ենթակա է լինում ցլրտահարման, կեղևակերների հարձակման և վարակվում «խեժահոսության» հիվանդությամբ: Բացի դրանից, լվիճը մեծ վնաս է պատճառում իր քաղցր արտաթորանքի միջոցով: Լվիճը իր դարգացման ընթացքում արտաթորում է մեծ քանակությամբ քաղցրահամ, թանձր հյուսթ («մեղրացող»), որը թափվելով ծառի տերևների, պտուղների և ճյուղերի վրա, խանգարում է նյութերի փոխանակության (ասիմիլացիոն) պրոցեսին, փչացնում է պտուղի որակը և իջեցնում նրա ապրանքային արժեքը: Այդ քաղցր արտաթորանքի մեջ բազմանում են սնկերը և փչացնում են բնի ճյուղերի կեղեր:

Այդ բոլորը պատճառ են դառնում դեղձենու չորանալուն: Աշնանը լվիճները մեծ խմբերով ձվադրում են դեղձենու բնի, գլխավոր ճյուղերի վրա ու իրենք ոչնչանում են: Տերևաթափից հետո, բնի և ճյուղերի վրա շատ լավ երևում են նրանց ձվերի գաղութները:

ՊԱՅԲԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Աշնանը, տերևաթափից անմիջապես հետո, ձվերի գաղութների վրա սրսկել 8—10 տոկոսանի հանքայուղային էմուլսիա, կամ 3 տոկ. օձառային սուղակ, կամ 7—8° կալցիումի պոլիսուլֆիդի լուծույթ:

2. Գարնանը, բողբոջների բացման շրջանում, լվիճների ձվերից դուրս գալուց հետո սրակել կոնտակտ թույն:

Վերցնել 1 լ ջրին 3 գր նիկոտին սուլֆատ, 3 գր օձառ կամ 0,6 տոկ հնթօձառային սուղակ:

ԴԵՂՁԵՆՈՒ ՏԵՐԵՎԱՅԻՆ ԼՎԻՃՆԵՐ

Դեղձենու տերևների վրա զարգանում են մի քանի տեսակ լվիճներ՝ դեղձենու լվիճ, հելիօսրիզի լվիճ, սալորենու (դամբուլի) լվիճ և այլն: Դրանք բոլորն էլ դեղձենու գլխավոր վնասատուներ են և ՀՍՍՌ-ի պայմաններում տարածված են այն բոլոր շրջաններում, որտեղ մշակվում է դեղձենին:

ա) Դեղձենու լվիճ

Փոքր, 1,5—2 մմ մեծությամբ դեղնակապույտ լվիճ է: Այս լվիճ խիստ բազմակեր է: Նա զարգանում է մի քանի տասնյակ բույսերի վրա, որոնց շատերի վնասատուն է: Բոլորից շատ վնաս է պատճառում դեղձենուն, ծխախոտին, բամբակենուն, բոստանային կուլտուրաներին ու դեկորատիվ բույսերին:

Լվիճի հիմնական բույսը հանդիսանում է դեղձը: Նա դեղձենու վրա ձմեռում է ձու ստադիայում, ճյուղերի բողբոջների արանքում: Չվերը մոտ 0,6 մմ են և սև փայլուն դույն ունեն:

Գարնանը, ձմեռող ձվերից, բողբոջների բացման սկզբին դուրս են գալիս անթև էգ լվիճները, որոնք սկզբում ծծում են նոր բացվող բողբոջի դադաթից, իսկ հետագայում, երբ տերևները դուրս են գալիս, անմիջապես անցնում են տերևների տակ ու ծծում նրանց հյութը: Լվիճների ծծելու հետևանքով դեղձենու տերևները արագ սիգարաձև ոլորվում են եզրից դեպի գլխավոր ջիղը: Լվիճները, բազմաճյուղ սիգարաձև ոլորված տերևների մեջ, ծծում են տերևի հյութը, որի հետևանքով տերևը դեղնում և չորանում է: Մասնաճյակի բազմաճյան տարիներին լվիճը գանգրոտացնելով դեղձենու տերևները և ծծելով նրանց հյութը, խիստ իջեցնում է բերքատվությունը: Վարակված ծառերի պտուղների մեծ մասը թափվում է, իսկ մնացածներն էլ փոքր են լինում:

Լվիճը դեղձենու վրա տալիս է 3 գեներացիա: Հունիսի առաջին կեսին հանդես են գալիս թևավոր էգ լվիճները, որոնք գաղթում (միգրացիա) են կատարում դաշտային կուլտուրաների ծխախոտի, բամբակի, բոստանային բույսերի, ճակնդեղի և այլնի վրա: Ամբողջ ամառը լվիճը դարգանում է դաշտային բույսերի վրա, տալով 10—12 գեներացիա: Աշնանը, սեպտեմբեր—հոկտեմբերին, նորից հանդես են գալիս թևավոր էգերը և արուները, որոնք թռչում են դեղձենու վրա: Բեղմնավորվելուց հետո ձվադրում են բողբոջների արանքում և իրենք ոչնչանում:

բ. Հելիսրիգի լվիճ

Շատ փոքր, 1,2—1,5 մմ մեծությամբ կանաչ գույնի լվիճ է: Այս լվիճի հիմնական բույսը նույնպես դեղձենին է: Սրա դարգացման ցիկլը շատ նման է դեղձենու լվիճին, այն տարբերությամբ, որ սրանց ծծելուց՝ տերևները շատ մանր ծալքերով լայնությամբ դանգրոտում են: Բացի այդ, սրանք դարգանում են դիսավորապես երիտասարդ ծառերի վրա կամ հասակավոր ծառերի շվերի ծայրին: Ուժեղ բազմանում են տնկաբաններում և նշենու վրա:

Այս լվիճը նույնպես միգրացիա է կատարում մուլախոտերի վրա, բայց ավելի ուշ՝ հունիսի վերջերին հուլիսի սկզբներին:

Աշնանը նորից վերադառնում է դեղձենու վրա և ձվադրում ճյուղերի կեղևների ճեղքերում ու ինքը ոչնչանում:

գ. Դամբուլի (սալոբենու) լվիճ

Բացդեղնավուն գույնի, 2,2—2,8 մմ մեծությամբ, մարմինը և դլոխը բարակ մոմի փոշով ծածկված լվիճ է: Ուժեղ բազմանում է ծիրանենու, դամբուլների, նշենու, դեղձենու վրա:

Չմեռում է ձու ստադիայում, վերը նշված կորիզավոր պտղատու ծառերի վրա, բարակ ճյուղերի բողբոջների արանքում:

Գարնանը, բողբոջների բացման շրջանում, ձվերից դուրս են գալիս կուսածին էգերը և սկսում ծծել բողբոջներից, իսկ հետո անցնում են տերևների վրա: Այս լվիճի ծծելուց՝ ծառերի տերևները չեն ձևափոխվում, այլ արագ դունափոխվում, դառնում են

սպիտակալուռն, հետո չորանուռն հն: Լվիճը միգրացիա է կատարում (գաղթում է) ավելի ուշ՝ հուլիսի վերջերին՝ եղեգնի վրա: Աշնանը նորից վերադառնում է նշված կորիզավոր պաղատու ծառերի վրա ձմադրելու:

Համարյա ամեն տարի շատ ուժեղ բազմանում է ծիրանենու վրա, և լվիճի գաղութները ծածկում են տերևների ամբողջ թիթեղը՝ տակի կողմից:

Դեղձենու տերևային լվիճներին դարձանը ոչնչացնում են տարբեր տեսակի դատիկները, սիրֆիդ ճանձերը և այլ պարազիտ ու դիշատիչ միջատները:

Որոշ տարիներ պարազիտները և դիշատիչները կանխում են լվիճների մասսայական բազմացումը:

ԴԵՂՁԵՆՈՒ ԼՎԻՃՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Աշնանը, տերևաթափից անմիջապես հետո դեղձենու, ծիրանենու, նշենու, սալորենու այգիները սրակել հանքայուղային էմուլսիայով՝ 8—10 տոկ, խտությամբ:

Եթե սրակումը կատարվում է ավիացիայով՝ սրակել մաքուր սուլյարային յուղով, հեկտարին՝ 100—150 կգր, կամ 2—3 տոկ, ենթածառային սուղակների լուծույթով, կամ 7—8⁰ կալցիումի պոլիսուլֆիդի լուծույթով, կամ յուղակավային 4 տոկոսի էմուլսիայով:

Բոլոր տեսակի սրակումները պետք է կատարել, երբ օդի ջերմությունը 5 աստիճանից բարձր է:

2. Այդ նույն թույներով սրակումները կարելի է կատարել վաղ դարձանը, բողբոջների ուռչելու շրջանում, մինչև նրանց բացվելը:

3. Բողբոջների բացվելու շրջանում սրակել կոնտակտ թույներով, որի համար վերցնել՝ 1 լ ջուր, 2—3 գր նիկոտին—սուլֆատ, 4 գր օձառ, իսկ եթե դժվար է ճարել նիկոտին կամ անարագին սուլֆատ, պետք է տեղում պատրաստել ծխախոտի մնացորդներից խաշվածք կամ թրջվածք, հետևյալ ձևով.—

Վերցնել ծխախոտի չոր մնացորդներից մանրացված մեկ մաս և այն թրջել տակառների կամ կաթոսների մեջ՝ 10 մաս

դուլ (20—30⁰) ջրի մեջ և այդպես թողնել մեկ օր և օրվա ընթացքում մի քանի անգամ թխով խառնել: Եթե ջուրը 30⁰-ից սառն է, պետք է այդ թրջվածքը կաթսաների մեջ 30—40 րոպե թույլ կրակի վրա եռացնել: Եռացնելու ժամանակ պետք է լավ խառնել, և միշտ ջուր ավելացնել, որպեսզի կաթսայում թրջվածքը միշտ նույն բարձրության վրա լինի:

Եռացնելուց հետո պետք է թողնել խաշվածքը սառի, որից հետո, պարկով պետք է լավ քամել: Պարկի մեջ մնացած ծխախոտի մնացորդները թափել, իսկ քամվածքը օգտագործել: Քամված հեղուկից լվիճների դեմ սրակելու բանվորական լուծույթ պատրաստելու համար 100 լիտր ջրին պետք է խառնել 3—5 լիտր, ավելացնելով 0,4⁰/₀ օձառ: Մեկ հեկտար պտղատու կորիզավոր ծառերի այգի սրակելու համար անհրաժեշտ է վերցնել 1200—2000 լիտր բանվորական լուծույթ:

Հիշյալ կոնտակտ թույլներից լվիճների դեմ պետք է սրբակիլ բողբոջների բացման շրջանում, ծաղկելուց անմիջապես հետո, անհրաժեշտության դեպքում՝ 6—7 օր հետո և մեկ էլ աշնանը, երբ լվիճները վերադառնում են պտղատու ծառերի վրա ձվադրելու (սեպտեմբերի վերջին, հոկտեմբերի սկզբին),

3. Պտղատու ծառերի միջշաքային տարածություններում և նրա շուրջը չցանել լոստան, ծխախոտ, բամբակեղի, ճակնդեղ և այլն:

ՆՇԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Նշենու գլխավոր վնասատուներ են այն բոլոր լվիճները, որոնք դարդանում և բազմանում են դեղձենու վրա: Նշենու լվիճների դարդացման ցիկլը, հասցրած վնասի բնույթը և չափը շատ նման է դեղձենու լվիճների վնասատվության, միայն այն տարբերությամբ, որ դեղձենու ցողունային լվիճը նշենու վրա թույլ է բազմանում:

Պայթարի միջոցառումները նույնն են, ինչ նշել ենք դեղձենու լվիճների նկատմամբ:

Մ ՄԻՐԱՆԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Մեր պայմաններում ծիրանենու վրա, որպես վնասատուներ դարգանում են կորիզավորների (պտղացեց) ցեցը, դամբուլենու, սալորենու լվիճը, խնձորենու պողակերը, պտղառինխիտը (բալենու երկարակնձիթը) և տերևոտը: Ծիրանենուն վնասում են նաև ամենակեր մետաքսագործները (ոսկետուտիկը, տարադույզ մետաքսագործը): Ծիրանենու վրա կարող են բազմանալ նաև խնձորենու ցեցը և ուրիշ ամենակեր վնասատուները:

ԿՈՐԻԶԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՅԸ

(ՊՏՂԱՅԵՅ — ПЛОДОВОЯ МОЛЪ)

Կորիզավորների ցեց է կոչվում նրա համար, որովհետև գլխավորապես դարգանում է կորիզավոր պտղատու ծառերի վրա (ծիրանենու, սալորենու, բալենու և այլն):

Կորիզավորների ցեցն իր դարգացման ցիկլով և մորֆոլոգիական կառուցվածքով շատ նման է խնձորենու ցեցին: Սաևս տալիս է տարեկան մի դեներացիա, ձմեռում է առաջին հասակի թրթուր վիճակում ծառի ճյուղերի վրա՝ վահանիկի տակ: Թրթուրները նույնպես սնվում են տերևների պարենխիմիային մասերով, թողնելով ջղերը: Եթե տերևները չեն բավարարում, սնվում են պտուղներով և դալար շվերով:

Կորիզավորների ցեցի թիթեուը նման է խնձորենու ցեցին, բայց վերջինից տարբերվում է նրանով, որ սա բազմանում է գլխավորապես կորիզավոր ծառերի վրա: Կորիզավորների ցեցի թրթուրները, վահանիկի տակից դուրս գալուց հետո, անմիջապես ցրվում են տերևների վրա և բաց կերակրվում են: Նրանք տերև չեն աղանում: Կորիզավոր ցեցը ծառերի տերևների և սաղարթի վրա ոստայնարներ չի պատրաստում, ապրում է առանձին-առանձին և փոքր խմբերով էլ հարսնեկավորվում է: Թիթեուները հարսնյակներից շուտ են թռչում, քան խնձորենու ցեցի թիթեուները:

Պայթարի միջոցները — նույնն են, ինչ որ խնձորենու ցեցի նկատմամբ:

ԴԱՄԲՈՒԼԵՆՈՒ ԿԱՄ ՍԱԼՈՐԵՆՈՒ ԼՎԻՃ

(Մանրամասն նկարագրությունը տես դեղձենու վնասատուների բաժինը): Պողատու ծառերից բուրբից շատ վնաս է պատճառում ծիրանենուն:

Համարյա ամեն տարի ծիրանենու վրա տալիս է մասսայական բազմացում: Լվիճը ձմեռող ձվերից դուրս է գալիս բողբոջների բացման շրջանում: Սկզբնական շրջանում ծծում է բողբոջներից, իսկ հետագայում տերևների ներքևի երեսից: Լվիճների ծծելուց տերևները չեն ձևափոխվում, այլ արագ դուրսաթափվում են և չորանում: Լվիճները ծիրանենու վրա են մնում մինչև հուլիսի երկրորդ կեսը, որից հետո թռչում են եղևզնի վրա: Ամբողջ ամառը բազմանում են եղևզնի վրա և աշնանը ետ վերադառնում ծիրանենու վրա, ուր և ձվադրում են բողբոջների արանքում և իրենք ոչնչանում են:

Պայթարի միջոցառումները — Տես դեղձենու վնասատուների բաժինը:

ԽՆՁՈՐԵՆՈՒ ՊՏՂԱԿԵՐԸ


Մանրամասն նկարագրությունը տես խնձորենու վնասատուների բաժինը:

Այստեղ պետք է նշել այն, որ խնձորենու պտղակերով ուժեղ վարակվում են ծիրանենու տեղական «խարջի» ստրատերը:

ՊՏՂԱՌԻՆԽԻՏ (ԲԱԼԵՆՈՒ ԵՐԿԱՐԱԿՆՃԻԹ)

Բզեզը կանաչ-կարմրավուն գույնի է, ոսկեփայլով, մարմինը ծածկված է մոխրագույն մազերով, մեծությունը 5—9 մմ:

Չարգանում է ծիրանենու, բալենու, սալորենու վրա: Բզեզը վնասում է բողբոջներին, պտուղներին, իսկ թրթուրը՝ կորիզներին (տես նկ. 16):



Նկ. 16. Պտղառինխիտ.

1) թրթուրը, 2) հարսնյակը, 3) բզեզը, 4 և 5) վնասվածքը

Պտղառինխիտը ուժեղ բազմանում է Հայաստանի հարավային շրջաններում և որոշ չափով նաև հարավարևմտյան շրջաններում:

Բզեզները ձմեռում են հողի ճեղքերում. գարնանը շուտ բարձրանում են ծառի սաղարթը ու սնվում՝ պտղաբույրոջներով: Պտուղները կազմակերպվելուց հետո, երբ ծիրանենու կորիզի կեղևը դեռ չէ պնդացել («ցողոլի» շրջանում), բզեզները ծախում են պտուղների կողքից լայն փոսիկ՝ մինչև կորիզը: Այդ

փոսիկի հատակում թողնում են թմբիկ, որի վրա դնում են իրենց կրք, սպիտակ ձուռն: Մի բղեղը կարող է դնել մինչև 200 ձուռ: Հետևապես, նա կարող է ծակել 120 պտուղ: Չվաղրումը ձգձգվում է մինչև մեկ և կես ամիս: Չվաղրումից հետո ձվից դուրս է գալիս թրթուրը և մտնում պտղի կորիզի մեջ: Վարակիված պտուղները 2—3 շաբաթից հետո թափվում են գետին: Պտղի հետ միասին հողի վրա է ընկնում թրթուրը, որը դուրս է գալիս պտղի միջից և մտնում հողի մեջ հարսնեկալորովելու: Հարսնյակներից դուրս են գալիս բղեղներն ու մնում հողի մեջ ձմեռելու, մինչև դարուն:

Պայքարի միջոցները նույնն են, ինչ կաղարկայի դեմ կիրառվող միջոցառումները (տես խնձորենու վնասատուները):

ՏԵՐԵՎՈՒՈՐԸ

Կանաչ դուռնի, 15—16 մմ երկարությամբ շատ շարժուն թրթուրներ են, որոնք ծիրանենու վրա հանդես են գալիս գարնանը, ոստայնի թելով մի քանի տերև միացնում են միմյանց, իրենք մտնում են այդ միացած տերևների մեջ ու ներսից ուտում տերևները: Մայիսի սկզբին թրթուրները հավաքվում են չոր կեղևների տակ և բարակ, սպիտակ մետաքսյա բոժոժի մեջ հարսնեկալորովում: Թիթեռները հարսնյակներից դուրս են թռչում հունիսին: Սրանք փոքր թիթեռներ են, որոնց թևերի բացվածքը 25 մմ է, առջևի թևերը շիկավուն են: Ալիքաձև մուգ դեբրով հետին թևերը սպիտակ են: Թիթեռները կույտերով ձվադրում են չոր ճյուղերի և բնի կեղևի վրա: Չմեռում է ձուռն:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1) Գարնանը, ապրիլ ամսից, ծառերի բները և գլխավոր ճյուղերը լավ մաքրելուց հետո, կապել որսող գոտիներ մինչև մայիսի սկիզբը:

Որսող գոտիների վրայից հավաքել տերևուղորի հարսնյակներին և բոժոժի մեջ մտած թրթուրներին ոչնչացնել: Եթե որսող գոտիների վրա շատ են հավաքվել տերևուղորի թրթուրներ և հարսնյակներ, հավաքել որսող գոտիները և այրել:

2. Ծառերի ծաղկելուց աճմիջամբու հետո սրսկել 0,1 տակ-
փարիզյան կանաչի սուսպենզիա, խառնելով կրկնակի քանակի
չհանդած կիր:

3. Ս,2 հանը, տերևաթափից հետո, սրսկել ձվերի վրա ազ-
դող հանքայուղային էմուլսիա:

ՍԱԼՈՐԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Սալորներին և ալուչաներին ՀՄՍՌ պայմաններում մեծ
վնաս են հասցնում կորիզավորների ցեցը, պտղառինխտը,
պտղակերը, լվիճները, տերևուլորները և վահանակիրները:

Ծիրանենու վնասատուների բաժնում մանրամասն նկարա-
զրեցինք կորիզավորների ցեցը, պտղառինխտը, ուստի այդ
վնասատուների վրա այլևս չենք կանգ առնի (տես՝ «Ծիրանենու
վնասատուները» բաժինը):

ՍԱԼՈՐԵՆՈՒ ՊՏՂԱԿԵՐԸ

Իր դարգացման ցիկլով և հասցրած վնասի ձևով նման է
խնձորենու պտղակերին:

Սրա թիթեռը քիչ փոքր է և առջևի դադաթին չկան «հա-
յելիններ», թևերը դարչնամոխրագույն են: Թրթռը՝ ավելի
վառ-վարդագույն է, փորի տակը սպիտակավուն է և շատ շար-
ժուն: Բավական է մի փոքր դրդիտ՝ և նա շատ արագ կշարժի
փորիկը և դուռիսը: Թրթռը ձմեռում է բոժոժիկի մեջ՝ կեղևի
ձեղքերում և ծառի փշակներում, ուր դարձանը հարսնեկա-
վորվում է: Հարսնյակի շրջանը տևում է 10—20 օր, որից հետո
դուրս են թռչում թիթեռները: Թիթեռները մայիսին ձու են
դնում են սալորենու պտուղների վրա: Չվից դուրս է գալիս
թրթռը և մտնում պտղի մեջ: Թրթռի ներս մտած տեղից
կեժ է դուրս գալիս և անցքի վրա կուտակվում է լորձուն ալ-
տաթորանքի հատիկներ: Թրթռերն ուտում է կորիզը, որից հե-
տո պտուղները թափվում են: Թափված պտուղների միջից
դուրս են գալիս թրթռերները, մտնում հողի մեջ և հարսնե-
կավորվում: ՀՄՍՌ-ի պայմաններում տալիս է երկու դեներա-
ցիա: Պտղակերով շատ ուժեղ վարակվում են խոշոր պտուղ ու-
նեցող նրբատեսակները:

ՊԱՅԲԱՐԻ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ

Տես խնձորենու պտղակերի դեմ պայքարի միջոցառումները: Բացի այդ, սալորենու պտղակերի թրթուրները և հարսնյակները ձմեռը և ամառը ոչնչացնելու համար պետք է ուշ աշնանը կատարել միջշարքային տարածությունների վար (կամ փորել) ու ջրել: Վաղ դարնան՝ հողի մշակություն: Միջշարքային տարածությունները հաճախակի փխրացնել և ջրել:

ՍԱԼՈՐԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒ ԼՎԻՃՆԵՐԸ

Սալորենու վրա ՀՄՍՌ-ի պայմաններում դարգանում են մի քանի տեսակ լվիճներ: Բոլոր տեսակներն էլ սալորենու նրբատեսակներին վնաս են պատճառում, նրա տերևներից և կանաչ մասերից հյութը ծծելու միջոցով: Սալորենու վնասատու լվիճները ձմեռում են ձու ստադիայում, ծառերի ճյուղերի, բնի վրա, բողբոջների տարանքում կամ ճեղքերում:

Վաղ դարնանը, բողբոջների բացման շրջանում, ձմեռող ձվերից դուրս են գալիս լվիճներն ու ծծում նոր բացվող բողբոջներից, իսկ հետագայում՝ տերևներից:

Նրանք բոլորն էլ սալորի վրա 2—3 սերունդ բազմամարտուց հետո դադարում են տարբեր մոլախոտերի վրա, միայն դամբուլենու լվիճը ամառը դարգանում է դամբուլի տարբեր նրբատեսակների, հատկապես դեղնասալորի վրա:

Աշնանը, նորից լվիճները վերադառնում են սալորենու վրա ձվադրելու:

Պայքարի միջոցառումները նույնն են, ինչ որ դեղձենու լվիճների դեմ գործադրվողները (տես դեղձենու վնասատուների բաժինը):

ԲԱԼԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

ՀՄՍՌ-ի պայմաններում բալենու և կեռասենու գլխավոր վնասատուներն են հանդիսանում կորիզավորների (բալենու) սինխիտը և բալենու լվիճը: Որոշ դեպքերում բալենու վրա բազմանում է պտղացեցը:

Կորիզավորների (բալենու) ունիսիտը համարյա ամեն տարի զգալի մնաս է պատճառում բալենու և կեռասենու բերքին. շատ այգիներում բզեզները ծակում են պտուղների մոտ 40—60 տակոսը և իրենց ձուռն դնում են նրանց մեջ: Վարակված պտուղները (մի կողմը ծակված) շուտ հասունանում են, բայց պտուղի մի կողմը մսալի և հյութալի չի լինում, պտուղը փոքր է լինում: Այգալիսի պտուղները կորցնում են իրենց ապրանքային արժեքը և վերամշակման համար դառնում են միանգամայն անպետք:

Բզեզի մորֆոլոգիան և բիոլոգիան մանրամասն նկարագրել ենք ծիրանենու մնասատուների բաժնում:

Պայքարի միջոցառումները նույնն են:

Միայն պետք է այստեղ ավելացնել հետևյալը: Բալենու և կեռասենու բերքը մաստայական հավաքելու ժամանակ պետք է արկղերի մեջ հավաքած բերքն այգում երկար ժամանակ չթողնել: Բերքը պետք է հավաքել ձեղքեր և անցքեր չունեցող արկղերի մեջ: Բերքահավաքից հետո, վարել կամ փոխել միջշարքային տարածությունները և ծառերի բների շուրջը: Պայքարի քիմիական և մեխանիկական միջոցառումները պետք է կատարել դարնանը (տես ծիրանենու մնասատուների բաժինը):

ԲԱԼԵՆՈՒ ԼՎԻՃ

Սև, փայլուն լվիճ է: Չմեռում է ձու ստադիայում, ծառի ճյուղերի վրա: Գարնանը, բողբոջների բացման շրջանում, ձվերից դուրս են գալիս լվիճները և ծծում են տերևներից: Լվիճների ծծելու հետևանքով տերևները խիստ կուչ են գալիս ու դանդրոտվում: Բալենու լվիճն ուժեղ բաղմանում է գլխավորապես տնկարաններում և երիտասարդ ծառերի վրա: Մեծ ծառերի վրա նա բաղմանում է գլխավորապես սաղարթի հիմքի, դալար ճյուղերի ու տերևների վրա:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ

Աշնանը և վաղ դարնանը սրսիել օվիցիդներ՝ ձվերը ոչընչացնելու համար, իսկ բողբոջների բացման շրջանում՝ կոնտակտ թույններ՝ լվիճների գաղաթների վրա: Մանրամասնությունը տես դեղձենու տերևային լվիճների դեմ պայքարի միջոցառումների բաժնում:

ԸՆԿՈՒՋԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

ՀՍՄԽ-ում, հատկապես նախալեռնային և հարավային շրջաններում, (Սլավերդում, Նոյեմբերյանում, Իջևանում, Շամշադինում, Ղափանում, Մեղրիում, Կոտայքում և այլն), լայն չափով մշակվում է ընկուշյղը: Ընկուշյղը մեծ չափով տարածված է նաև մեր անտառներում (Ղափան, Ղարաբաղլար և այլն): Մեր կոլխոզնիկները սրոշ տարիներ լավ բերք են ստանում ընկուշյղից: Մակայն ստացած բերքի զգալի մասը փչացնում է պտղակերը: Որոշ տարիներ պտղակերը վարակում է պտուղների մինչև 40—50 տոկոսը:

Ընկուշյղենու պտղակերը փոքր, 8—9 մմ երկար թիթեռ է, թևերի բացվածքը 18—23 մմ է: Նրա առաջին թևերը արճիճամոխրագույն են, սրանց հիմքում կան դուգահեռ լայնությամբ դնացող երկու սև շերտեր, իսկ գագաթնային մասը մի քիչ վարդագույն է: Հասուն թրթուրը մուգ կարմրավուն կամ կանաչավուն գույն ունի, գլուխը և կրծքի սաքերը սև են: Մարմինը ծածկված է մազիկներով: Հարսնյակը մուգ—դարչնագույն է, մեջքը համարյա սև:

Հասուն թրթուրը ձմեռում է հաստ և ամուր մետաքսյա կոկոնի մեջ՝ ծառերի բների, ճյուղերի կեղևների տակ, չոր ճյուղերի վրա և այլ տեղերում: Գարնանը, պտուղների կազմակերպման շրջանում, ձվերից դուրս են թռչում թիթեռները և ձվադրում կատարում պտուղների վրա 7—8 օրից հետո ձվերից դուրս են գալիս թրթուրները և պտղակոթունի կողմից մտնում պտուղի մեջ: Մեկ թրթուրը երբեմն վարակում է միմյանց կից երկու-երեք պտուղ: Պտուղի միջուկը ուտելուց սեփանում է, փչվում:

Թրթուրները, մի քանի պտուղ ոչնչացնելով, լրիվ դարձանում են, սրանց երկարությունը հասնում է մինչև 16 մմ-ի: Թրթուրները դուրս են գալիս պտուղների միջից, իջնում բնի չոր, կլապոկ կեղևների տակ և խմբերով կոկոնավորվում: Կոկոնների մեջ թրթուրները կամ նորից հարսնեկավորվում են, կամ մնում են ձմեռելու:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1) Մայիսի երկրորդ կեսից մաքրել ծառերի բները չոր-
կիսապող կեղևներից և բներին ու հաստ ճյուղերին կապել որ-
սող գոտիներ: Տաս օրը մեկ անգամ նայել որսող գոտիները և
ոչնչացնել նրանց վրա հավաքված թրթուրներին և հարսնյակ-
ներին: Որսող գոտիները ծառերի վրա թողնել մինչև սեպտեմ-
բեր ամիսը:

2) Գարնանը, թիթեռների մասսայական թռիչքի ժամա-
նակ, ընկուզենին փոշոտել ԴԴՏ-ի փոշիով կամ սրակել աղի-
քային թուջնի սուսպենզիայով:

3) Վարակված պտուղները հավաքել և ոչնչացնել:

ՆՌՆԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Նռնենու պտուղները շատ քիչ են վարակվում պտղակերով:
Նրա գլխավոր վնասատուն լիճն է: Նռնենու լիճը փոքր, 1,5—
1,8 մմ մեծությամբ դեղնականաչավուն դույնի է: Նա ձմե-
ռում է ձու ստադիայում, նռնենու ճյուղերի վրա: Գարնանը,
տերևների կաղմակերպման շրջանում, ձվերից դուրս են դալիս
լիճները և ծծում տերևներից: Լիճների ծծելուց՝ տերևները
չեն ձևափոխվում: Լիճի դադութները մեծ չափերի են հաս-
նում ծաղկման շրջանում: Բոլոր ծաղկակոկոնները, ծաղիկները և
նոր կաղմակերպված պտուղները ծածկվում են լիճների դա-
դութներով: Ծծելու հետևանքով թափվում են ծաղկակոկոնների
ու ծաղիկների մի մասը, իսկ պտուղը մնում է փոքր և լավ չի
զարգանում:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծաղկման նախօրյակին և ծաղկելուց հետո սրակել կոն-
տակտ թուջներով:

ԱՅԼ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐ

Թղենին, փշատենին վնասվում են բաղմակեր մետաքսադործ-
ներից: Նրանց վրա զարգանում են նաև լիճները: Որովհետև
լիճների քանակը չնչին է լինում, այդ պատճառով էլ նրանք
զգալի վնաս չեն պատճառում:

Պատգամու ծառերի վրա, ՀՄՍՌ-ի պայմաններում, բազմա-
նում են բազմաթիվ տեսակի վահանակիրներ (կողցիդներ),
որոնցից շատ տեսակներ պատգամու ծառերի վնասատուներ են
հանդիսանում (ստորակետանաման, մանիշակագուշն, ակացիայի,
գնդակաձև, դոսկավոր, մեծ վահանակիր և այլն): Այս մի-
ջատներն աչքի են ընկնում ճյուղերի, բնի, տերևների և
պտուղների վրա որպես անշարժ նստած կլոր, երկարավուն,
գնդակաձև ուռուցքներ: Նրանց գուշնը նույնպես տարբեր է:
Յուրաքանչյուր տեսակի վահանակիրը ունի իր վահանիկի յու-
րահատուկ ձևը, գուշնը և դարգացման ցիկլը: Այս միջատների
վահանիկը իրենից ներկայացնում է միջատի մեջքի գեղձերի
պնդացած արտաթորանքը, կամ հենց իրեն՝ միջատի մաշկային
ծածկոցը՝ կարծրացած վիճակում:

Վահանիկի տակ նստած միջատն ունի երկար ծակող-ծծող
կնձիթ, որով ծծում է ծառերի ճյուղերի, տերևների, բնի և
պտուղների հյուսթը: Այս միջատները երբեմն այնքան են բազ-
մանում, որ նրանց գաղութները ծածկում են ծառի ճյուղերը,
բունը կամ տերևները: Նրանց ծծելու հետևանքով ծառերը թու-
լանում և չորանում են, իսկ եթե ծծում են տերևներից, սրանք
գեղնում ու թափվում են: Պտուղների վրա նրանց ծծելու հե-
տևանքով առաջանում են տարբեր գուշնի ու մեծության բծեր:
Վահանակիրները բույսերին վնաս են պատճառում նաև իրենց
քաղցր ու մածուցիկ արտաթորանքով: Մեծ քանակությամբ
արտաթորանք թափելով տերևների և կանաչ շվերի վրա, ծած-
կում են նրանց հերձանցքները և խանգարում բույսի նյութերի
փոխանակությունը:

Վահանակիրները ծառերի տնկիների և կտորների հետ
միասին տարածվում են այլ վայրեր:

Վահանակիրները ձմեռում են ծառերի բնի, ճյուղերի վրա
տարբեր ստադիաներում, այսպես, օրինակ, ստորակետանաման
վահանակիրը ձմեռում է ձու ստադիայում, ակացիայի վահա-
նակիրը՝ թրթուրի երկրորդ հասակում, մանիշակագուշն վահա-
նակիրը՝ հասուն թրթուրի և էգի ստադիայում և այլն:

Գարնանը, երբ սկսվում է ծառերի հյուսթաշարժությունը, վահանակիրները սկսում են ծծել նրանց հյուսթը: Որոշ ժամանակ անցնելուց հետո, երբ դուրս են գալիս տերևները և կազմակերպվում պտուղները, որոշ տեսակի վահանակիրների թրթուրներ (ակացիայի, կալիֆորնիական և այլն) անցնում են պտուղներին և տերևների վրա: Վահանակիրների թրթուրներն իրենց առաջի և երկրորդ հասակներում ակտիվ շարժվում են, իսկ երկու անգամ մաշկափոխվելուց հետո դառնում են անշարժ: Ծրծելով ծառերի բնի, ճյուղերի, տերևների, պտուղների հյուսթը, նրանք հասունանում են, սրից հետո էգերը ձվադրում են իրենց վահանիկի տակ և իրենք սատկում: Վահանակիրների մեծ մասը տարեկան տալիս է մեկ գեներացիա (սերունդ), իսկ որոշ տեսակներ (կալիֆորնիական) տալիս են 2—3 սերունդ և այլն:

ՊԱՅԲԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Աշնանը, տերևաթափից հետո, վարակված ծառերը սրբուկել հանքային յուղով, մասսիվներում նպատակահարմար է կատարել ամիացիայի օդնուշյամբ, ծախսելով մեկ հեկտարին 100 կգր, կամ մյուս մեքենաներով՝ 8—10 տոկոս հանքայուղային էմուլսիաներով կամ 6—8 տոկ. կալցիումի պոլիսուլֆիդի լուծույթով:

2. Գարնանը, ծառերը ծաղկելուց հետո, նրանց մատղաշ թրթուրների դեմ սրսկել կոնտակտ թույլներով՝ դարնան դողաներով (ինչպես լիճների դեմ):

3. Ուշ աշնանը կամ դարնանը, վարակված բները, ճյուղերը երկաթյա խողանակով մաքրել սավանների վրա և այլիլ թրթուրները:

4. Վերջին ժամանակներս կոկցիդների դեմ պայքարում են գիշատիչ և պարազիտ միջատների միջոցով, օգտագործելով դատիկների որոշ տեսակներ:

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԿԵՂԵՎԱԿԵՐՆԵՐԸ

Պտղատու ծառերի գլխավոր վնասատուների շարքին են պատկանում կեղևակեր բզեզները: Վնասակար կեղևակերների տեսակների թիվը շատ է: Յուրաքանչյուր ծառատեսակ ունի իր կեղևակերը: Կեղևակերները փոքրիկ բզեզներ են, որոնց մարմնի

մեծությունը տատանվում է 2—6 մմ-ի միջև: Կեղևակերները սնվում են կեղևի տակ լուրի շերտով: Կեղևակեր բզեզների փոքր վերջին սեզմենաները ցածի կողմից թեք՝ դեպի վեր նեղանում են կտրվածքի տեսքով:

Թրթուրները սպիտակ կամ բաց-դեղնավուն են, անոտք, մարմինը ադեղնաձև:


Կեղևակերները մեծ մասամբ ձմեռում են թրթուրի սառ-դիայում, կեղևի տակ: Փարնանը, հարսնեկավորվում են, որոնցից դուրս եկած բզեզները ծակում են կեղևը, դուրս դալիս նրա տակից՝ երեսի կողմը: Կեղևի վրա բեղմնավորվում են, որից հետո էգերը նորից մի ուրիշ տեղից ծակում են կեղևը և մտնում նրա տակ:

Մտնելով կեղևի տակ, բզեզը ուտելով մեկ անցք է բացում մայր անցք) և այդ անցքի եզրերին դնում իր ձվերը (60—70 հատ):

Չվերից դուրս են դալիս անոտք, սպիտակ թրթուրները և ուտելով շարժվում տարբեր ուղղությամբ, բաց անելով իրենց ետևից տարբեր ձևի անցքեր: Մի քանի շաբաթից հետո, այդ անցքերի վերջին թրթուրները հասունանում են ու հարսնեկավորվում:

Հարսնյակից դուրս եկած բզեզները մի քիչ սնվում են և դարձյալ ծակում կեղևը ու դուրս դալիս նրա տակից: Թրթուրների անցքերի դասավորությունը և ձևը տարբեր է լինում տարբեր տեսակների մոտ (տես նկ. 17):

Կեղևակերները զարգանում են այն ծառերի վրա, որոնք վատ խնամքի հետևանքով կամ ձերության պատճառով թուլացել են: Առողջ և նորմալ զարգացող ծառերի վրա կեղևակերները չեն կարողանում բազմանալ:



Նկ. 17. Կնճառա կեղևակերի բզեզը և վնասվածքը
 1) թրթուրը, 2) բզեզը, 3) վնասվածքը (ըստ Բողղանով Կատկովի):

ՊԱՅԻԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Ագրոտեխնիկական կամ պլեքս միջոցառումների կիրառմամբ, պաղատու աչգոււմ ստեղծել բոլոր պայմանները ծառերի նորմալ զարգացման համար: Ճիշտ ու ժամանակին կաղմակերպել պայքարը պաղատու ծառերի վնասատուների և հիվանդությունների դեմ:

2. Վաղ դարձանը կտրել, աչգոււց հեռացնել ծառերի չոր և կեղևակերներով վարակված ճյուղերը ու անմիջապես աչգոււց դուրս տանել և օգտագործել որպես վառելիք:

3. Բները և ճյուղերը կեղևակերներից ղերծ պահելու համար, դարձանը քսել կավի և գոմաղբի խառնուրդ, իսկ ուժեղ վարակված ճյուղերը կտրել:

4) Գարնանը, բզեզների թռիչքի ժամանակ, այգուս արհեստակահանորեն ստեղծել վրավհաճյուղեր կամ ծառեր, որի համար, վայրի կամ շատ ծեր ծառերի որոշ ճյուղերի հիմքից կեղևը օղակաձև հանել, երբ այդ ճյուղը կսկսի չորանալ, կեղևակերները կհասնին կեղևաղուրկ այդ ճյուղերի կամ ծառերի վրա ձվադրելու: Որից հետո պետք է կտրել այդ ծառերը կամ ճյուղերը և այրել կեղևակերների հետ միասին:

5. Ծեր ծառերը երիտասարդացնել պատվաստի և այլ միջոցներով:

6. Այդին մաքրել չոր ճյուղերի մնացորդներից:

ՊԱՅՔԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

ա) ԱՇՆԱՆԸ՝ (ՏԵՐԵՎԱԹԱՓԻՅ ՀԵՏՈ)

1. Հավաքել և ոչնչացնել թափված տերևները և ուրիշ բուսական մնացորդները:

2. Սալանների («մեղար») վրա մաքրել ծառերի բները և հաստ ճյուղերը հին չորացած կեղևից, տարազույգ մետաքսայործի ձվերից, վահանակիրներից և քարաքոսերից, մամուռից, սնկերից և ոչնչացնել բոլորը:

3. Տարազույգ մետաքսայործի ձվերի կույտերի վրա նավթ կամ հանքային յուղ լցնել:

4. Կտրել հիվանդ, չորացած և կեղևակերներով վարակված ճյուղերը ու անմիջապես այգուս դուրս տանել և օգտագործել որպես վառելիք:

5. Ծառերի միջշարքային տարածությունը խոր վարել, փորել ծառերի բաժակները և ուշ աշնանը լավ ջրել:

6. Երիտասարդ ծառերի բներին եղեգնի կամ ծղոտի գոտեփուռնջ կապել կամ քսել կրակաթ՝ թարմ գոմաղրի հետ խառնած:

7. Մաքրել և ցեմենտով լցնել ծառերի փշակները: Ծառերի բների և կեղևների վրա եղած ճեղքերը և վերքերը ծածկել (ձեփել) մածիկով:

8. Ծառերի բները, զվտավորապես ճյուղերը քսել 30⁰/օ-ի թարմ կրակաթով:

9. Սրտիկել բոլոր ծառերը կալցիումի պլախտալֆիդի 7—8 տոկոսի խտությամբ լուծույթով, կամ 8—10 տոկոսի հանքայուղային էմուլսիայով:

10. Ցրտերը սկզբելուց կամ ձյունը տեղալուց հետո հավաքել և այրել աշնան սկզբին ծառերի շաքիչը պատրաստած (խոտ, դարման, տերև և այլն) որսող գոտիները:

Հավաքել և այրել ոսկետուռիկի, ալոճաթիթեռի ձմեռային բները և ծառի վրա մնացած չոր պտուղները:

բ) ԳԱՐՆԱՆԸ՝

1. ԲՈՂԲՈՋՆԵՐԻ ՈՒՌՉԵԼՈՒՅ ՄԻՆՉԵՎ ԲԱՅՎԵԼԸ

1. Ծառերի բներին կապել թրթուրորս սասինձի գոտիներ և դրանց վրայից սխտեմատիկորեն հավաքել վնասատուներին և ոչնչացնել:

2. Սավանների վրա երկու անգամ թափ տալ ծառերը, թափված երկարակնճիթները հավաքել ու ոչնչացնել:

2. ԲՈՂԲՈՋՆԵՐԻ ԲԱՅՎԵԼՈՒՅ ՄԻՆՉԵՎ ԾԱՂԿԵԼԸ

1. Երբորդ անգամ սավանների վրա թափ տալ ծառերը՝ Հիվանդ, կեղևակերներով վաքակված, չոր ձյուղերը կտրել ծառերից և այգուց դուրս տանել:

2. Հավաքել օղակավոր մեռաքսադործի դարմանային բները և ոչնչացնել:

3. ՈՐԴՆԱԾ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԹԱՓՎԵԼՈՒՅ ՄԻՆՉԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

1. Մեկն օր հավաքել թափված պտուղները և այգուց դուրս տանել:

2. Ծառերին դնել որսող գոտիներ և 7—8 օրը մեկ անգամ նրանց վրայից հավաքել պտղակերների թրթուրներին ու հարանյակներին և ոչնչացնել:

գ) ՀՆԴԱՎՈՐ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԱՅԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Ուշ աշնանը և վաղ դարմանը, մինչև բողբոջների ուռչելը ավիացիայի օգնությամբ սրտիկել մաքուր սոլյարային յուղով, կամ այլ սրտիկչ մեքենաներով 8—10 տոկոս հանքայուղային էմուլսիայով, մեկ հեկտարին ծախսել 100—150 կգ:

2. Բողոքոջների բացվելուց մինչև ծառերի ծաղկելը սրսկել 2—3 տակ, հանքայուղային էմուլսիայով, ավիացիայով սրսկել ԴԴՏ 10 տակ, սուղպենդիլայով, կամ փոշոտել արսենատ կալցիումով:

3. Ծաղկակոկոսների առանձնացման շրջանում սրսկել կոմբինացված բաղադրություն:

1 տակոս բորոքյան հեղուկին խառնել 2 տակ, դիպելային յուղի էմուլսիա, 0,1 տակոս փարիզյան կանաչ և 0,1 տակոս նիկոտին սուլֆատ:

4. Ծաղկելուց հետո սրսկումը կրկնել հիշյալ կոմբինացված բաղադրությամբ: Միայն, այն դեպքում վերցնել մեկ տակոս դիպելային յուղի էմուլսիա:

5. Պատռների կաղձակերպման շրջանում, կամ ծաղկելուց 12—14 օր հետո նորից կրկնել հիշյալ կոմբինացված բաղադրությամբ սրսկելը: Երբորդ անդամ կրկնել՝ վերջի սրճակումից 7—8 օր հետո:

6. Խնձորենու ծաղկակերի բզեզները հարսնյակներից մասնաշաղկան դուրս դալու շրջանում՝ փոշոտել արսենատ կալցիումով, կամ 5 տակ ԴԴՏ փոշիով:

7. Ծաղկելուց 24—28 օր հետո սրսկել 1 տակոս դիպելային յուղի էմուլսիայով և 0,1 տակ, փարիզյան կանաչի՝ բաղադրությամբ:

8. Պաղակերի 2 և 3 դեներացիաների դեմ կատարել ամառային սրսկում՝ 2 տակոս դիպելային յուղի էմուլսիայի, 0,3 տակոս արսենատ-կալցիումի և 0,2 տակոս նիկոտին-սուլֆատի կոմբինացված բաղադրությամբ:

9. Պաղաթափը սկսվելիս ծառերի բների և ճյուղերի վրա դնել սրսոյ դոտիներ և յուրաքանչյուր 5—6 օրը մեկ անգամ ստուգել և հավաքել նրանց վրայից պաղակերի թրթուրներին ու հարսնյակներին և ոչնչացնել դրանց:

10. Հունիսի վերջին—հուլիսի սկզբին, ցեցի թիթեռի մասնաշաղկան թռիչքի շրջանում, փոշոտել 5 տակոս ԴԴՏ փոշիով:

11. Աշնանը, տերևաթափից հետո սրսկել ավիացիայով՝ մաքուր սոլյարային յուղ՝ հեկտարին 100—150 կգ, կամ մյուս սրսկիչներով՝ 8—10 տակ, հանք. յուղերի էմուլսիայով:

դ) ԿՈՐԻՉԱՎՈՐ ՊՏՂԱՏՈՒ ՆԱՌԵՐԻ ԱՅԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Աշնանը, տերևաթափից հետո, ըլիճների ձվերի դեմ սրսկել հանքային յուղեր՝ մաքուր ըլիճալուծ (ալիտորսկման դեպքում) հեկտարին 100—120 կգր., մյուս սրսկիչներով՝ 8—10 տոկ. հանքային յուղերի կամուխայն՝ կամ 2—3 տոկ. կնիթ-օճառային սուղակներով:

2. Գարնանը, մինչև բողբոջների բացվելը, սալանների վրա երկու անգամ թափ տալ ծառերը, հավաքել երկարակնճիթ բղեղներին և ոչնչացնել:

3. Ծաղկման նախօրյակին սրսկել բորոքյան հեղուկի կոմբինացված բաղադրություն՝ խառնելով նրան 0,1 տոկ. փարիզյան կանաչ և 0,1 անաբաղիս սուլֆատ:

4. Ծաղկելուց անմիջապես հետո սրսկել կոմբինացված թույն՝ 0,75 տոկ. բորոքյան հեղուկ, 0,1 տոկ. փարիզյան կանաչ, 0,1 տոկ. նիկոտին սուլֆատ (դեղձենիների վրա առանց փարիզյան կանաչի):

5. Ծաղկելուց 10—12 օր հետո սրսկել բոլոր պաղատու ծառերը և 15 օրից հետո կրկնել երրորդ սրսկումը:

6. Վարել կամ փորել սալորի ծառերի միջշարքային տարածությունը և բնի շուրջը:

7. Ամեն օր հավաքել թափված պտուղները և ոչնչացնել:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածութիւն	3
2. Խնձորենու, տանձենու և սերկէկիւղու վնասատուները	5
Խնձորենու ծաղկալէքը	5
Խնձորենու սէքը	10
Ալոնաթիթիւ	14
Պսկետուտիկ	14
Օղակալոր մետաքսագործ	17
Տարազույզ մետաքսագործ	19
Կաշարկա	20
Բրդապատ ծաղկակեր ըզէզ	23
Խնձորենու պողակեր	24
Խնձորենու սղոցողը	30
✓ Տանձենու սղոցողը	32
Տանձենու ռինխիւղ	33
Բուկարկա	34
Խնձորենու բրդապատ լվիճ	37
Խնձորենու կանաչ լվիճ	39
Տանձենու պսիւղ	41
Խնձորենու պսիւղ	43
Տանձենու տերևային լվիճներ	44
Տանձենու մլուկ	45
3. Դեղձենու վնասատուները	46
Դեղձենու ցողունային լվիճ	46
Դեղձենու տերևային լվիճներ	48
4. Նշենու վնասատուները	51
5. Ծիրանենու վնասատուները	52
Կորիզավորները ցեցը	52
Սալորենու լվիճը	53
Խնձորենու պողակերը	58

Պատգամին խիտ	53
Տերևուտը	55
6. Սալորենու վնասատուները	56
Սալորենու պտղակերը	56
Սալորենու ֆնասատու լվիճները	57
7. Բալենու վնասատուները	57
Բալենու լվիճը	58
8. Ընկուղենու վնասատուները	59
9. Նոնենու վնասատուները	60
10. Պտղատու ծառերի վնասատու վահանակիրները և պայթարի միջոցառումները նրանց դեմ	62
11. Պտղատու ծառերի կեղևակերները	62
12. Պայթարի ընդհանուր միջոցառումները պտղատու աչգու վնասատուների և հիվանդությունների դեմ	65
13. Պտղատու ծառերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայթարի միջոցառումների հաջորդականությունը, դործադրվող բուժանյութերի դոզաները և ծախսման նորմաները	69
14. Բովանդակություն	

Պատ. խմբագիր՝ Խ. ԶՈՒՅԱՆ
 Ճեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
 Կոնսուլ սրբագրիչ՝ Ե. ՊՏՈՒՂՅԱՆ

ՎՅ 02391 Պատվեր 12, Տիրած 2000. Տպագր. 4,5 մամուլ.
 Հեղ. 2,5 մամ. Հանձնված է արտադրության 20/VI 1947 թ. Ստորագրված է տպագրության 22/VI 1948 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008527

ԿԻՆԸ 4 Ռ.

24951

A^{II}
118762

6